



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ  
ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ  
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ  
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎՐԱ

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2018, Երևան

*This study was made possible through the full support of Open Society Foundations – Armenia’s Policy Fellowship Program Initiative. Ideas, thoughts, and arguments presented in the paper are the sole expression of the author’s views and do not reflect those of Open Society Assistance Foundations – Armenia.*

*Մույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնության ծրագրի շրջանակներում:*

*Հողվածում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:*

## **Երախտագիտության խոսք**

Հետազոտության հեղինակն իր շնորհակալությունն է հայտնում Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանյան թիմին՝ հանրային քաղաքականության ոլորտում հեղինակին իր հետաքրքրությանը համապատասխան հետազոտություն իրականացնելու հնարավորություն տալու համար:

Հետազոտությունն ամբողջական դարձնելու համար հեղինակը խորհրդակցել է և հարցազրույցներ անցկացրել ոլորտի մասնագետների հետ, որոնց իր խորին շնորհակալությունն է հայտնում՝ հատկացված ժամանակի, կարծիքների ու աջակցության համար:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
Հետազոտության նպատակը .....	5
Մեթոդաբանություն.....	6
Դատական իշխանության անկախության վերաբերյալ միջազգային չափանիշները .....	8
1. Դատական իշխանության ինքնակառավարման մարմինները.....	13
1.1.Ինքնակառավարման մարմինների գործունեության երաշխիքներն ու կարգավիճակը ըստ ՀՀ-ում իրականացված դատաիրավական ոլորտի բարեփոխումների.....	17
1.2.Ինքնակառավարման մարմինների գործառույթները և դրանց արտացոլումը ՀՀ Դատաիրավական բարեփոխումների ծրագրերում.....	28
1.2.1. դատավորների նշանակում, առաջխաղացում.....	28
1.2.2. դատավորների կարգապահական պատասխանատվություն ..	28
1.2.3. Դատավորների պաշտոնի նշանակման և կարգապահական պատասխանատվության հիմնահարցերը ՀՀ-ում իրականացված դատաիրավական բարեփոխումների ծրագրերում .....	31
Եզրակացություն .....	40
Առաջարկություններ .....	43

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության բարեփոխումներն ու անկախության հաստատմանն ուղղված քայլերը սկսվել են անկախացումից անմիջապես հետո:

Իրականացված բարեփոխումնրը պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ հիմնական փուլերի.

1. Բարեփոխումների **առաջին փուլը**, մասնավորապես, սկսվեց 1995թ. Սահմանադրության ընդունմամբ,
2. **երկրորդ փուլի** սկզբնավորումը պայմանավորվեց 2005թ. Սահմանադրական փոփոխություններով, որի շրջանակներում իրականացվեցին երկու ծրագրեր՝ **2009-2011թթ. և 2012-2016թթ. դատական և իրավական ծրագրերը**,
3. **երրորդ փուլը** հիմք դրվեց 2015թ. Սահմանադրական փոփոխություններով, որի առանցքային նպատակներից էր ապահովել իրավունքի գերակայության հետևողական իրացումը:

Սահմանադրական փոփոխությունները կյանքի կոչելու նպատակով իրականացվել են դատական և իրավական բարեփոխումների ծրագրերը, որտեղ առանցքայինը դատական իշխանության անկախության ապահովումն է:

Դատական և իրավական բարեփոխումների առաջին փուլը մեկնարկել է 1996 թվականից՝ նպատակ ունենալով վերացնել խորհրդային դատական համակարգը և ստեղծել նոր՝ անկախ, դատական համակարգ: Դատաիրավական ոլորտի ինստիտուցիոնալ բարեփոխման հիմքը հանդիսացավ Արդարադատության խորհրդի ձևավորումը: Ըստ էության, Արդարադատության խորհուրդը դատական իշխանության ինքնակառավարման մարմին էր, որը պատասխանատու էր դատավորների նշանակման, առաջխաղացման, պաշտոնից ազատման, դատական իշխանության ներքին այլ հարցերի առնչությամբ որոշումներ կայացնելու համար<sup>1</sup>:

Դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլը (2006-2009թթ.) հիմնականում բնութագրվում է դատարանների գործունեությանն առնչվող օրենսդրական փոփոխություններով:

Դատաիրավական բարեփոխումների այս փուլի գործողությունների, դրանց արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ, արդյունքների գնահատման զեկույցներ չեն պահպանվել:

<sup>1</sup> ՀՀ Սահմանադրություն, հոդված 94-95, 1995 թվական

Դատաիրավական բարեփոխումների հաջորդ ծրագրերն իրականացվել են համապատասխանաբար 2009-2011 և 2012-2016թթ: Այս ծրագրերում ևս թիրախավորվել է անկախ ու հաշվետու արդարադատություն ձևավորելու նպատակը, մասնավորապես՝ դատավորների նշանակման ընթացակարգերի, դատական իշխանության ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության ու կարգապահական վարույթների բարելավմանն ուղղված միջոցառումներով:

Ներկայումս երկրում ընթանում է դատական և իրավական բարեփոխումների երրորդ փուլի գործողությունների ծրագրի մշակումը<sup>2</sup>: Այն հիմնված է 2015 թվականի Սահմանադրական փոփոխությունների հայեցակարգի վրա՝ թիրախավորելով իրավունքի գերակայության և դատական իշխանության անկախության անհրաժեշտությունը<sup>3</sup>:

Չնայած իրականացված և պլանավորվող դատական և իրավական բարեփոխումների ծրագրերին, դրանից բխող գործողություններին՝ թե՛ տեղական, թե՛ միջազգային կազմակերպությունների գնահատմամբ, դատական իշխանության ինստիտուցիոնալ և դատավորների անհատական անկախության հարցը շարունակում է մնալ արդիական:

Դատական իշխանության անկախության բացակայությունն է, որ հիմք է հանդիսանում նաև ՀՀ-ում երկար տարիներ շարունակ մարդու իրավունքների հիմնախնդիրներին: Քանի որ, ինչպես հայտնի է, անկախ դատարանների բացակայությունն ու դատական իշխանության ոչ արդյունավետ մատուցումն ուղղակիորեն կապված են տվյալ երկրում իրավունքների պաշտպանության հետ:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Սույն հետազոտության հիմնական նպատակն է՝ ամփոփել և ներկայացնել ՀՀ-ում իրականացված դատական և իրավական բարեփոխումները, դրանց շրջանակներում կատարված գործողությունները դատական իշխանության անկախության համատեքստում:

Հետազոտության շրջանակներում որպես հետազոտական խնդիր առանձնացվել են **դատական իշխանության ինքնակառավարման մարմինների գործունեությանն ուղղված գործողությունները: Վերջինիս շրջանակներում որպես**

<sup>2</sup> Յուրաքանչյուր ծրագրի նպատակներն ու նախատեսված գործողությունները ցանկը կներկայացվի հաջորդող գլուխներում

<sup>3</sup> ՀՀ Սահմանադրական փոփոխությունների հայեցակարգ, Գլուխ 2, 2015

հետազոտական հարցեր են դիտարկվել դատավորների կարգապահական պատասխանատվության, առաջխաղացման, դատավորների նշանակման հիմնահարցերը:

Վերոգրյալով պայմանավորված՝ իրականացվել է դատական իշխանության անկախության ապահովմանն ուղղված ծրագրերի ուսումնասիրություն՝ միջազգային կառույցների կողմից ներկայացված հանձնարարականների ու առաջարկների, իրականացված ներպետական օրենսդրական փոփոխությունների հետ համեմատության մեջ:

Հետազոտությունը վեր է հանում ծրագրերի արդյունքում արձանագրված ձեռքբերումները և բացթողումները, դրանց հավանական պատճառները:

Հետազոտության արդյունքները ներկայացնում են, թե

- որքանով են դատական իշխանության ինքնակառավարման մարմինների գործողությունները արտահայտել իրականության մեջ առկա խնդիրները,
- որքանով են այդ գործողությունները համապատասխանել և արտահայտել ՀՀ ներկայացված միջազգային հանձնարարականներն ու առաջարկները:

## **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկությունը հավաքվել է հետևյալ եղանակով՝

- փաստաթղթերի ուսումնասիրություն
- հարցազրույցների իրականացում
- պաշտոնական հարցումներ:

### ***Փաստաթղթերի ուսումնասիրություն***

Հետազոտության շրջանակներում իրականացվել է մասնավորապես հետևյալ փաստաթղթերի ուսումնասիրություն ու վերլուծություն՝

- ՀՀ 1995 թվականի Սահմանադրության, 2005 և 2015 թվականների փոփոխությունների ուսումնասիրություն.
- 2007 թվականի ՀՀ Դատական օրենսգրքի ու դրա փոփոխությունների ուսումնասիրություն.
- դատական և իրավական ծրագրերի և դրանց գործողությունների պլանների ուսումնասիրություն՝ վերը ներկայացված հաջորդական փուլերով և

շեշտադրելով մասնավորապես ինքնակառավարման մարմինների գոյությունն ու գործառույթները՝ կարգապահական պատասխանատվության ու դատավորների նշանակման առումով:

- ՀՀ-ին ներկայացված հանձնարարականների հավաքագրում և ուսումնասիրություն, հավաքված տեղեկության համեմատական վերլուծություն:

Վերջիններիս կապակցությամբ հարկ է նշել, որ հիմնական շեշտադրումը կատարվել է ՀՀ դատախազական համակարգի վրա ուղղակի ազդեցություն ունեցող իրավական մեխանիզմների վրա, մասնավորապես՝ Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկյան հանձնաժողով) կարծիքներ, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպեր, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության զեկույցներ (այսուհետ՝ ՏՀԶԿ), Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (այսուհետ՝ ԳԲԵԿՈ) զեկույցներ, Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում գործող Համընդհանուր պարբերական դիտարկման (այսուհետ՝ ՀՊԴ) զեկույցներ:

### ***Հարցազրույցներ***

Փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո, հիմք ընդունելով վեր հանված հիմնական խնդիրները, դրանց շուրջ իրականացվել են հարցազրույցներ օրենսդրական փոփոխությունների հեղինակների, դատավորների և ոլորտի մասնագետների հետ:

Հարցազրույցների իրականացման համար նախապես մշակվել է հարցաշար, որը ներկայացրել է բացահայտված հիմնական խնդիրները:

### ***Պաշտոնական հարցումներ***

Ուսումնասիրությունն առավել ամբողջական և համակողմանի դարձնելու համար իրականացվել են նաև պաշտոնական հարցումներ համապատասխան պետական մարմիններ:



**ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Դատական իշխանության անկախությունը յուրաքանչյուր իրավական պետության հիմնաքարերից և ժողովրդավարական հասարակություն հաստատելու կարևոր նախապայմաններից է, ինչով պայմանավորված՝ դատարանների անկախության հարցի ուսումնասիրությունը գրավում է ոլորտի մասնագետների և արդարադատության հետ առնչվող յուրաքանչյուր անձի հետաքրքրությունը:

Ժամանակակից սահմանադրական համակարգերում դատական իշխանության անկախության սկզբունքը հենվում է իշխանությունների բաժանման սկզբունքի վրա: Այս սկզբունքի համաձայն՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները կազմում են կառավարման համակարգի երեք առանձին ճյուղերը, որոնք ձևավորում են փոխադարձ զսպիչների և հակակշիռների համակարգ:

Որպես արդյունք՝ օրենսդիր և գործադիր իշխանություններից դատական իշխանության անկախությունը երաշխավորում է տվյալ միջավայրում իրավունքի գերակայության հիմնադրումն ու ամրապնդումը, ինչպես նաև անհատի և նրա իրավունքների պաշտպանությունը:

Իզուր չէ, որ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային, տարածաշրջանային և, ըստ այդմ՝ նաև ներպետական իրավական բոլոր կարգավորումները նախատեսում են անձի՝ անկախ ու անաչառ դատարանի կողմից արդարացի դատաքննության իրավունքը, ինչի ապահովման երաշխիքը հանդիսանում են տվյալ երկրում տեսականորեն և պրակտիկայում անկախ գործող դատարանները:

Ուսումնասիրվող հարցին առնչվող առաջին և հիմնական իրավական փաստաթղթերից մեկը թերևս կարելի է համարել 1985 թվականին Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունված Դատական իշխանության Անկախության սկզբունքները,<sup>4</sup> որը համարվում է միջազգայնորեն ընդունված և հիմնարար ու ելակետային դեր ունեցող կանոն ՄԱԿ-ի անդամ երկրների օրենսդրությունների և հետագայում ընդունված մնացած իրավական փաստաթղթերի համար:

---

<sup>4</sup> Basic Principles on the Independence of the Judiciary, Adopted by the Seventh United Nations Congress on 1985, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/independencejudiciary.aspx>

Սկզբունքների համաձայն՝ դատական իշխանության անկախությունը պետք է երաշխավորվի տվյալ պետության կողմից և ամրագրում ստանա Սահմանադրության կամ օրենքի մակարդակում: Դատական իշխանության անկախությունը ապահովելը բոլոր պետական և ոչ պետական կառույցների պարտականությունն է<sup>5</sup>: Ավելին, սկզբունքներով սահմանվել է դատական գործընթացների անհարկի միջամտության ու կայացված դատական որոշումները վերանայելու արգելքը<sup>6</sup>: Նույն սկզբունքներով սահմանվում են նաև դատավորների ընտրության, առաջխաղացման ու վերապատրաստումների, ինչպես նաև պաշտոնավարման ժամկետների ու սոցիալական ապահովության երաշխիքների ընդհանուր հիմնարար դրույթները՝ որպես անկախության ապահովման երաշխիք: Մասնավորապես՝

- դատավորի պաշտոնում ընտրված անձինք պետք է լինեն բարեխիղճ և ունենան իրավաբանի համապատասխան որակավորում:
- Դատավորների ընտրության մեխանիզմը պետք է բացառի նշանակումների ոչ պատշաճ շարժառիթները:
- Դատավորների նշանակման գործընթացը պետք է բացառի խտրականության ցանկացած դրսևորում<sup>7</sup>:

Ինչ վերաբերում է դատավորների պաշտոնավարման ժամկետներին, անկախությանը, բավարար վարձատրությանն ու ծառայության պայմաններին, ապա այդ ամենը պետք է սահմանվի օրենքով<sup>8</sup>:

Դատարանների անկախության հարցն առանձնակի ուշադրության է արժանացել և շարունակում է արժանանալ Եվրոպայի խորհրդի շրջանակներում առկա մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կողմից:

Այսպես, ՄԻԵԴ-ը սահմանել է, որ, որպեսզի մարմինը, մասնավորապես՝ դատարանը, անկախ համարվի, անհրաժեշտ է գնահատել,

- թե ինչ եղանակով և ընթացակարգով են դատավորները նշանակվում,
- պաշտոնավարման ինչ ժամկետներ են նախատեսված,
- ինչպիսի երաշխիքներ կան արտաքին ճնշումներից պաշտպանելու համար,
- արդյոք այդ մարմինը անկախ է հանդես գալիս, թե՞ ոչ:

Դատարանի և դատավորների անկախությունը պահանջում է, որ դատավորները չունենան կանխակալ մոտեցում կամ կարծիք վեճի կողմերից

<sup>5</sup> Նույն տեղում, կետ 1

<sup>6</sup> Նույն տեղում, կետ 4

<sup>7</sup> Նույն տեղում, կետ 10

<sup>8</sup> Նույն տեղում, կետ 11

որևէ մեկի նկատմամբ՝ անձնական կամ նախկինում ունեցած կապերի պատճառով<sup>9</sup>:

Դատական իշխանության անկախության հարցում առանձնակի ուշադրություն են գրավում Վենետիկյան հանձնաժողովի մոտեցումները:

Այսպես, Վենետիկյան հանձնաժողովը բազմիցս՝ ինչպես առանձին երկրների վերաբերյալ, այնպես էլ որպես ընդհանուր ստանդարտի սահմանում, անդրադարձել է դատական իշխանության անկախության հարցին:

Ըստ հանձնաժողովի, դատական իշխանության անկախությունը հանդես է գալիս օբյեկտիվ և սուբյեկտիվ բաղադրիչներով: Օբյեկտիվ բաղադրիչը դատական իշխանության անբաժանելի որակն է /indispensable quality/, սուբյեկտիվ բաղադրիչը վերաբերում է անկախ դատավորի կողմից անձի իրավունքների և ազատությունների վերաբերյալ հարցի որոշմանը:

Վենետիկյան հանձնաժողովի կողմից հաստատված մոտեցման համաձայն՝ դատական իշխանության անկախությունը բաժանվում է երկու տեսակի՝

- ինստիտուցիոնալ և
- անհատական

Ինստիտուցիոնալ անկախությունը վերաբերում է երկրի ներսում իշխանությունների բաժանման, օրենսդիր և գործադիր մարմինների հնարավոր ճնշումներից դատարանների պաշտպանության հնարավորություններին և ազատ գործելուն: Անհատական անկախությունը վերաբերում է դատավորի կողմից գործերի քննությանն ու որոշումների կայացման ժամանակ հնարավոր ճնշումների բացակայությանը<sup>10</sup>:

Դատական իշխանության անկախությունը սահմանվում է նաև անկախության արտաքին և ներքին տեսակներով: Արտաքին և ներքին անկախության ապահովման չափանիշները, ընդհանուր առմամբ, հետևյալն են.

- Դատական իշխանության հիմնական սկզբունքները պետք է ամրագրում ստանան Սահմանադրության կամ համանման ուժ ունեցող իրավական փաստաթղթի մեջ:
- Դատավորների նշանակման և առաջխաղացման վերաբերյալ բոլոր հարցերը պետք է նախատեսվեն օրենքով և հիմնվեն օբյեկտիվ չափանիշների վրա:

---

<sup>9</sup> ECHR cases: Bryan v. the United Kingdom, N 19178/91, 1995, Delcourt v. Belgium, N 2689/65, 1970

<sup>10</sup> European Commission for Democracy through Law, Compilation of Venice Commission opinions, reports and studies on constitutional justice, 1 July 2015

- Դատավորների կարգավիճակի հետ անհամատեղելի գործունեության բացառությունը դատարանների անկախության ապահովման էական տարրերից է:
- Դատական իշխանության անկախության երաշխավորման կարևոր պայմաններից է դատական խորհրդի հիմնումը, որը դատավորների նշանակման և պաշտոնական առաջխաղացման հարցում որոշիչ դեր ունի:
- Դատավորները պետք է պաշտոնավարեն մինչև թոշակի անցնելը, փորձաշրջան նախատեսելը անկախության տեսանկյունից կարող է խնդրահարույց լինել:
- Դատավորի նկատմամբ հարուցվող կարգապահական վարույթներում որոշիչ դեր պետք է ունենան դատական խորհուրդները կամ կարգապահական դատարանները
- Դատավորների համար պետք է նախատեսվի վարձատրության այնպիսի չափ, որը համահունչ է նրանց կարգավիճակին, արժանապատվությանն ու իրականացվող գործառույթներին:
- Դատական իշխանության բյուջեն պետք է հիմնված լինի դատարանների անկախության ապահովման պահանջի վրա, և այդ նպատակով դատական իշխանությունը պետք է հնարավորություն ունենա իր կարծիքը հայտնել ներկայացված բյուջեի վերաբերյալ:
- Դատական որոշումները, դատական վերանայման ընթացակարգից բացի, այլ եղանակով վերանայման չեն կարող ենթարկվել:
- Դատական գործերի բաշխումը դատավորների միջև պետք է իրականացվի օբյեկտիվ և թափանցիկ չափանիշների հիման վրա: Այդ չափանիշները պետք է սահմանված լինեն օրենքով<sup>11</sup>:

Դատական իշխանության անկախության ապահովման համար ժամանակակից ժողովրդավարական հասարակությունները ստեղծել են անկախության ապահովմանը նպաստող մեխանիզմներ, որոնցից կենտրոնական են համարվում դատական իշխանության ինքնակառավարման մարմինները՝ ի դեմս խորհուրդների:

Ինքնակառավարման մարմինները դատական իշխանության անկախությունը ապահովող, դատավորների նշանակումն ու պաշտոնական առաջխաղացումը քաղաքական գործընթացներից և քաղաքական ազդեցությունից մեկուսացնելու և դատավորների հաշվետվողականությունն ապահովող պատասխանատու մարմիններ են:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում գոյություն ունեն դատական իշխանության անկախությանն ու ինքնակառավարման մարմիններին նվիրված

<sup>11</sup> Venice Commission, Report on the Independence of the Judicial System, 12-13 March 2010

մի շարք փաստաթղթեր: Մասնավորապես, ԵՄ Նախարարների կոմիտեի թիվ (2010)12 հանձնարարականը, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի և Վենետիկյան հանձնաժողովի իրավական դիրքորոշումները<sup>12</sup>:

Նախարարների կոմիտեի հանձնարարականով սահմանվում է դատարանների անկախության նպատակը, համաձայն որի՝ այն նպատակ ունի երաշխավորել յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքը՝ առանց անհարկի ճնշումների, հիմնվելով իրավական հիմքերի վրա<sup>13</sup>: Ինչ վերաբերում է դատավորների անհատական անկախությանը, ապա այն երաշխավորվում է ողջ դատական համակարգի անկախությամբ: Որպես այդպիսին, այն իրավունքի գերակայության հիմնարար բաղադրիչ է հանդիսանում<sup>14</sup>: Անդրադառնալով դատավորների արտաքին անկախության սկզբունքին՝ հանձնարարականը սահմանում է, որ վերջինս դատավորներին տրված առավելություն չէ, այլ իրավունքի գերակայությանն ու արդարություն փնտրողներին ծառայող միջոց<sup>15</sup>: Դատավորների անկախությունը պետք է դիտարկվի որպես ազատության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և օրենքի անաչառ կիրառության երաշխիք:

Խոսելով ներքին անկախության մասին՝ հանձնարարականը սահմանում է, որ դատական իշխանության անկախությունը նշանակում է որոշում կայացնելիս յուրաքանչյուր դատավորի անհատական անկախությունը: Որոշում կայացնելիս դատավորները պետք է լինեն անկախ և անկողմնակալ, ունակ լինեն գործելու առանց սահմանափակումների, գերծ մնալով ցանկացած մարմնի կողմից, ներառյալ դատական համակարգի ներսում գործող, դրսևորվող անհարկի ազդեցությունից, ճնշումներից, սպառնալիքներից կամ ուղղակի կամ անուղղակի միջամտությունից: Դատական իշխանության հիերարխիան չպետք է խաթարի դատավորների անհատական անկախությունը<sup>16</sup>:

Ներկայացվածը թույլ է տալիս վերահաստատել, որ դատական իշխանության անկախությունը իրավունքի գերակայության հաստատման էական նախապայման ու անքակտելի մասն է: Վերջինիս ամրապնդման համար կարևոր նշանակություն ունի ինչպես դատավորների անհատական, այնպես էլ դատական համակարգի համալիր անկախությունը: Դատավորների

<sup>12</sup> Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտեի թիվ (2010)12 հանձնարարական, 26-29-րդ կետեր, ԵԴԽԽ, No. 1 (2001) կարծիք, 45-րդ կետ, և No. 10(2007) կարծիք, Վենետիկյան հանձնաժողով, Դատական համակարգի անկախության մասին զեկույց: Մաս 1: դատավորների անկախություն (կետ 32):

<sup>13</sup> Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտեի թիվ (2010)12 հանձնարարական, կետ 3

<sup>14</sup> Նույն տեղում, կետ 4

<sup>15</sup> Նույն տեղում, կետ 11

<sup>16</sup> Նույն տեղում, երրորդ գլուխ, կետ 22

ու դատարանների անկախության երաշխավորման համար կարևորվում են դատական իշխանության ինքնակառավարման մարմինների՝ դատական խորհուրդների գործունեությունը, անկախության ապահովման երաշխիքները: Կարևոր նախապայման են հանդիսանում այդ մարմինների ձևավորման, կազմի ու գործառույթների իրականացման վերաբերյալ կարգավորումները:

## **1. Դատական իշխանության ինքնակառավարման մարմինները**

Դատական իշխանության ինքնակառավարման մարմինները՝ ի դեմս դատական խորհուրդների, դիտարկվում են որպես անկախ մարմիններ, որոնց նպատակն է դատական իշխանության ու առանձին դատավորների անկախության ապահովումը, ըստ այդմ նպաստելով դատական իշխանության արդյունավետ գործունեությանը<sup>17</sup>: Դատական խորհուրդների արդյունավետ գործունեության և նպատակային գործունեություն ծավալելու համար կարևոր նշանակություն ունի դրա ձևավորման կարգը, կազմն ու անդամները:

Դատական խորհուրդների ստեղծման պահանջ/պայմանն առաջարկել է Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեն իր թիվ (2010)12 հանձնարարականով, ինչպես նաև այդ հարցին անդրադարձել են Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը, Վենետիկյի հանձնաժողովը<sup>18</sup>:

### **Դատական խորհուրդների կազմը**

Ընդունելի է, որ դատական խորհրդի կազմավորման գործընթացում ներգրավեն իշխանության մյուս երկու ճյուղերը, այնուամենայնիվ, դա պետք է իրականացվի այն կերպ, որ դատական իշխանության անկախությունը չխաթարվի: Իշխանության մյուս ճյուղերի ներգրավվածությունը այստեղ պետք է հասցվի նվազագույնի, պայմանավորելով բացառապես դատական խորհրդի վարչարարական գործառույթները այդ ճյուղերի կողմից վերահսկելու անհրաժեշտությամբ<sup>19</sup>:

### **Դատական խորհրդի անդամների նշանակումը**

Դատական խորհրդի անդամների նշանակումը կենտրոնական դեր ունի հաշվետվողականության և հետագա անկախության ապահովման համար: Թեև

---

<sup>17</sup> Նույն տեղում, չորրորդ գլուխ, կետ 26

<sup>18</sup> Տե՛ս Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտեի թիվ (2010)12 հանձնարարական, 26-29-րդ կետեր, ԵԴԽԽ, No. 1 (2001) կարծիք, 45-րդ կետ, և No. 10(2007) կարծիք, Վենետիկյան հանձնաժողով, Դատական համակարգի անկախության մասին զեկույց: Մաս 1: Դատավորների անկախություն (կետ 32):

<sup>19</sup>Տե՛ս European Commission for Democracy through Law, Judicial Appointments, 2007, հասանելի է հետևյալ հղումով՝ [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2007\)028-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2007)028-e)

նշանակման գոյություն ունեցող մոդելները տարբեր են, այնուամենայնիվ, խմբավորվում են հետևյալ ընդհանուր մոտեցումները:

Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ խորհրդի անդամների մեծամասնությունը կամ գերակշիռ մասը պետք է լինեն դատավորներ՝ ընտրված դատավորների կողմից<sup>20</sup>: Վենետիկի հանձնաժողովն ընդունել է նաև, որ անդամների առաջադրման ընթացակարգը պետք է ոչ դատավոր անդամների մասնագիտական բազմազանություն ապահովի: Այս առնչությամբ պետք է դիտարկել մասնագիտացված հասարակական կազմակերպությունների անդամակցությունը<sup>21</sup>:

Իսկ ահա Եվրոպական միության շրջանակներում գործող Դատական խորհուրդների եվրոպական ցանցի համաձայն՝ խորհուրդը պետք է ունենա համընդգրկուն կազմ, որտեղ մեծամասնություն կկազմեն դատավորները: Վերջիններիս թիվը ոչ մի պարագայում չպետք է պակաս լինի անդամների ընդհանուր թվի 50%-ից<sup>22</sup>: Որպես լավագույն մոդել համարվում են այն խորհուրդները, որոնց կազմում ընդգրկվում են իրավաբանական համայնքի ներկայացուցիչներ, ինչպես նաև ակադեմիական ոլորտի կամ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, որոնք ունեն դատական իշխանության թափանցիկությունն ու անկախությունը ապահովելու բավարար լիազորություններ: Պահանջվում է նաև, որ այդ անդամները բավարար չափով ծանոթ լինեն դատական համակարգին:

Քաղհասարակության անդամ ներկայացուցիչները, սակայն, պետք է ոլորտում հեղինակություն վայելեն և կարողանան ներկայացնել հասարակ քաղաքացուն և հանրության կարիքները:

Եվրոպայի Դատավորների խորհրդատվական խորհրդի /հետայսու՝ ԵԴԽԽ/ համաձայն դատական խորհուրդների գործունեությունը պետք է սահմանադրական ամրագրում ստանան Սահմանադրության մակարդակում կամ համարժեք օրենքով: ԵԴԽԽ-ն նույնպես սահմանում է, որ Արդարադատության խորհուրդների կազմը պետք է այնպիսին լինի, որ կարողանա ապահովել դրա անկախությունն ու գործառույթները արդյունավետ իրականացնելու հնարավորություն տա: Ըստ այդմ, խորհուրդը հնարավոր է բաղկացած լինի բացառապես դատավորներից կամ ունենա անդամների խառը կազմ՝ բաղկացած դատավոր և ոչ դատավոր անդամներից: Երկու դեպքում էլ անդամների կողմից անձնական շահերն ու դրանց պաշտպանությունը պետք է գոյություն չունենան: Այն դեպքում, երբ կազմը բաղկացած է միայն

<sup>20</sup>Տե՛ս CDL-AD(2013)014 Opinion on the Draft Law on Amendments to the Constitution, Strengthening the independence of Judges and on the Changes to the Constitution proposed by the Constitutional Assembly of Ukraine (14-15 June 2013), para. 35 and CDL-AD(2010)026 Joint Opinion on the Law on the Judicial System and the Status of Judges of Ukraine, by the Venice Commission and the Directorate of Co-operation within the Directorate General of Human Rights and Legal Affairs of the Council of Europe (Venice, 15-16 October 2010).

<sup>21</sup> Venice Commission Opinion on the Draft Judicial Code of Armenia, 09 October 2017, հասանելի է հետևյալ հղումով՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2017\)019-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2017)019-e)

<sup>22</sup> European Network of Councils for the Judiciary, Report 2010-2011, էջ 4

դատավորներից, ապա նրանք պետք է ընտրվեն անմիջապես դատավորների կողմից: Խառը կազմի պարագայում, ավելորդ ճնշումներից խուսափելու համար, անդամների գերակշիռ մեծամասնությունը պետք է դատավորներ կազմեն<sup>23</sup>: Անկախ մասնագիտացումից, խորհրդի անդամները պետք է ընտրվեն *կարողությունների, փորձի, դատական գործընթացների ճանաչողության, ինչպես նաև անկախության մշակույթին հարելու չափանիշներով*: Ոչ դատավոր անդամները հնարավոր է լինեն հայտնի իրավաբաններ, ակադեմիկոսներ, դասախոսներ: Անդամներից պահանջվում է քաղաքական զսպվածություն, ինչպես նաև գործադիր իշխանությունից կատարյալ անկախություն, ինչը նշանակում է, որ կառավարության գլուխը կամ որևէ նախարար չի կարող Արդարադատության խորհրդի անդամ լինել:

Այս առումով կարևորվում է նաև խորհրդի անդամների, և հատկապես խորհրդի նախագահի անկողմնակալությունը, ինչը ենթադրում է, որ մտերմությունը քաղաքական կուսակցությունների հետ պետք է բացառել: Օրինակ, խորհրդարանական կառավարման համակարգերում, որտեղ երկրի ղեկավարը օժտված է միայն ֆորմալ լիազորություններով, հնարավոր է վերջինս նշանակվի նաև արդարադատության խորհրդի նախագահ, մինչդեռ կառավարման այլ համակարգերում խորհրդի նախագահը պետք է լինի դատավոր և ընտրվի խորհրդի անդամների կողմից<sup>24</sup>:

Դատական խորհրդի կազմի վերաբերյալ առանձնակի կարևորվում են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի /հետայսու՝ ՄԻԵԴ/ մոտեցումները: Ըստ ՄԻԵԴ-ի՝ խորհրդի կազմում անդամների առնվազն կեսը դատավոր լինելու պարագայում գործում է անկողմնակալության ողջամիտ կանխավարկած: ՄԻԵԴԸ ևս հաստատում է, որ խորհրդի կազմի դատավոր անդամները պետք է ընտրվեն դատավորների կողմից<sup>25</sup>:

Դատական խորհուրդների կազմում ոչ դատավոր անդամների ներգրավվածության անհրաժեշտությունն առնչվում է ոչ միայն դատավորի շահերին, այլ նաև հանդիսանում է արդարադատության որակի, դրա իրականացման անկողմնակալության նախապայման: Նման վերահսկողությունը կարող է բարձրացնել արդարադատության իրականացման նկատմամբ հասարակության վստահությունը<sup>26</sup>:

<sup>23</sup> Consultative Council of European Judges (CCJE), Opinion no.10(2007), հասանելի է հետևյալ հղումով՝ [https://rm.coe.int/168074779b#\\_ftn9](https://rm.coe.int/168074779b#_ftn9)

<sup>24</sup> նույն տեղում, կետ 33

<sup>25</sup> Case of RAMOS Nunes De Carvalho E Sa v. Portugal, ECHR, App N 55391/13, 57728/13, 74041/13, para 75, 21 June 2016

<sup>26</sup> Venice Commission, Opinion on Recent Amendments to the Law on Major Constitutional provisions of the Republic of Albania, CDL-INF(1998)009, para. 9.



Ինչ վերաբերում է խորհրդի ձևավորման ընթացակարգին, ապա ԵԴԽԽ-ն սահմանել է, որ խորհրդի անկախությունն ապահովելու համար դատավոր անդամները պետք է ընտրվեն դատական իշխանության կողմից: Պետք է ապահովել, որ դատավոր անդամները ներկայացված լինեն դատական իշխանության բոլոր մակարդակներից: Կարևորվում է նաև, որ ընտրության կազմակերպումը հնարավորինս պահպանի դատական իշխանության նկատմամբ հանրային վստահությունը:

Խորհրդի ոչ դատավոր անդամները, ըստ ԵԴԽԽ-ի, չպետք է ընտրվեն գործադիր իշխանության կողմից: ԵԴԽԽ-ն խորհուրդ է տալիս ոչ դատավոր անդամների նշանակման գործընթացը զերծ պահել քաղաքականացված ընթացակարգերից: Եթե ոչ դատավոր անդամները ընտրվում են տվյալ երկրի ազգային ժողովի կողմից, ապա ընտրվող անդամները չպետք է խորհրդարանի անդամ լինեն և պետք է ընտրվեն որակյալ մեծամասնության կողմից՝ ընդդիմության աջակցությամբ և մասնակցությամբ, և որ ամենակարևորն է, պետք է ապահովեն հասարակության լայն ներկայացվածությունը:

Դատական իշխանության եվրոպական ցանցը ևս հաստատել է, որ դատական խորհրդի անդամների նշանակումը պետք է բացառի գործադիր կամ օրենսդիր մարմնի միջամտությունը<sup>27</sup>:

Վենետիկյան հանձնաժողովը նշել է, որ գործադիր մարմնի ներկայացուցչությունը խորհրդի կազմում չի կարող խաթարել խորհրդի անկախությունը, սակայն, արդարադատության նախարարը չպետք է մասնակցություն ունենա խորհրդի բոլոր որոշումների կայացմանը, օրինակ, կարգապահական պատասխանատվության հարցերով<sup>28</sup>:

Այս մոտեցումը երևում է նաև տեսական գրականության մեջ<sup>29</sup>: Ընդհանուր առմամբ, անդամների նշանակման հարցում **քաղաքական վերահսկողությունը** դիտարկվում է որպես անընդունելի մոտեցում և լուրջ խոչընդոտ արդարադատության անկախության համար:

---

<sup>27</sup> St ' u ENCJ (2010–2011) Councils for the Judiciary report

<sup>28</sup> CDL-AD(2013)014 Opinion on the Draft Law on Amendments to the Constitution, Strengthening the independence of Judges and on the Changes to the Constitution proposed by the Constitutional Assembly of Ukraine (14-15 June 2013), para. 35 and CDL-AD(2010)026 Joint Opinion on the Law on the Judicial System and the Status of Judges of Ukraine, by the Venice Commission and the Directorate of Co-operation within the Directorate General of Human Rights and Legal Affairs of the Council of Europe (Venice, 15-16 October 2010

<sup>29</sup> St ' u Guarneri C (2007) *Courts and marginalized groups. Perspectives from Continental Europe*. Int J Const Law 5(2):187–210

## 1.1. Ինքնակառավարման մարմինների գործունեության երաշխիքներն ու կարգավիճակը ըստ ՀՀ-ում իրականացված դատաիրավական ոլորտի բարեփոխումների

### Առաջին փուլի բարեփոխումներ

1995 թվականի ՀՀ առաջին Սահմանադրության ընդունմանը հաջորդեց անցումային շրջանի խնդիրները հաղթահարելու համար դատաիրավական ոլորտի ինստիտուցիոնալ և օրենսդրական հիմքերի ստեղծման անհրաժեշտությունը:

Առաջին Սահմանադրությամբ դատական իշխանության անկախության երաշխավորման ինքնակառավարման մարմիններ նախատեսված չէին:

Ըստ Սահմանադրության՝ *դատարանների անկախության երաշխավորը դիտարկվում էր հանրապետության նախագահը*<sup>30</sup>:

Սահմանադրությամբ թեև նախատեսվում էր Արդարադատության խորհրդի գործունեությունը, սակայն, դատական իշխանության անկախության երաշխավոր այն չէր հանդիսանում:

Խորհուրդը ղեկավարվում էր հանրապետության նախագահի կողմից: Խորհրդի փոխնախագահներն էին արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը: Կազմի մեջ մտնում էին նաև ՀՀ նախագահի կողմից 5 տարի ժամկետով նշանակված 14 անդամ՝ 2 իրավաբան գիտնական, 9 դատավոր, 3 դատախազ<sup>31</sup>:

Արդարադատության խորհրդի կազմի և գործունեության հարցերը կարգավորվում էին «Արդարադատության խորհրդի» մասին ՀՀ օրենքով<sup>32</sup>:

Բարեփոխումների առաջին փուլի ռազմավարական նպատակը երկրում անկախ, արդյունավետ ու վստահություն ներշնչող դատական իշխանության ստեղծումն էր: Առանձնացվել էին ոլորտային վեց նպատակներ, որտեղ առաջնային տեղ էր զբաղեցնում դատական իշխանության *ինքնակառավարման ուժեղացումը դատարանների նախագահների խորհրդին աջակցելու միջոցով*:

Որպես նպատակի ինդիկատոր սահմանվել էր դատարանների նախագահների խորհրդի կարողությունների ուժեղացումն ու վերջինիս կողմից դատական իշխանության արդյունավետ կառավարումը:

<sup>30</sup> ՀՀ Սահմանադրություն, հոդված 94, 1995թ.

<sup>31</sup> Տես նույն տեղում

<sup>32</sup> <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1752&lang=arm&enc=utf8>

Նպատակին հասնելու համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները՝

- դատական իշխանության ինքնակառավարման մարմինների զարգացում, հատկապես դատարանների նախագահների խորհրդի և դրա վարչական գրասենյակի ստեղծում:
- Դատարանների վարչարարության ժամանակակից համակարգի ստեղծում:
- Գործերի վարման նոր մոդելի ստեղծում և կիրարկում:
- Դատարանների ավտոմատացում:

Քննարկվող շրջանի համար նախատեսված գործողությունների կատարման վերաբերյալ սակայն որևէ հաշվետվություն չի ներկայացվել և չի պահպանվել:

Խոսելով այս շրջանի մասին՝ օբյեկտիվորեն կարելի է փաստել, որ ՀՀ-ում անկախացումից հետո, դեռևս 90-ականներին, չի եղել դատական իշխանության անկախության մշակույթ, չի եղել նաև դրա ձգտում: Քանի որ գերիշխող է եղել սովետական մտածելակերպը, իշխանությունների տարանջատման սկզբունքը, առավել ևս դատական իշխանության անկախությունը, որպես այդպիսին, գոյություն չի ունեցել: Ավելին, իշխանությունների բաժանման սկզբունքը մեր երկրում չի ընկալվել որպես իշխանությունների հավասար բաժանում, քանի որ երկար տարիներ բոլոր ուժերը վերահսկվել են հանրապետության նախագահի կողմից: Այս մասին նշվել է նաև հարցազրույցի մասնակցած ոլորտի մասնագետների կողմից: Ավելին, նշվել են նաև կարծիքներ առ այն, որ նշված խնդիրը առավել ցայտուն էր 1995թ. և այդ ժամանակ գործող Սահմանադրությամբ դատական իշխանության անկախության երաշխիքները բացակայում էին:

Նման պայմաններում, իշխանության բոլոր թևերը եղել են խոցելի, սակայն առավել խոցելի է եղել դատական իշխանությունը: Վերջինս, չունենալով ներքին և արտաքին պաշտպանություն, եղել է գործադիր իշխանության հսկողության ներքո՝ ի դեմս հանրապետության նախագահի:

Դատական և իրավական բարեփոխումների **երկրորդ փուլը, որն ընդգրկում էր 2006-2009 թվականները**, 2005 թվականի Սահմանադրական փոփոխությունների տրամաբանական շարունակությունն էր: Այն հիմնականում ներառում էր օրենսդրական նախաձեռնությունների և օրենսդրական փաթեթների ընդունմանն ուղղված գործողություններ: Այս առումով մեծ նշանակությունն ուներ 2007 թվականին ընդունված ՀՀ Դատական օրենսգիրքը: Վերջինս պետք է արտացոլեր ոլորտին վերաբերող բազմաթիվ միջազգային համաձայնագրերի պահանջները, սահմաներ դատական իշխանության ինքնակառավարման մարմինները, Արդարադատության խորհրդի լիազորությունները: Այս փուլի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր՝ սահմանափակ հնարավորություններով, հանդիսացել է 2009-2011 թվականների դատական և իրավական բարեփոխումների ծրագիրը՝ նախորդ ծրագրին կատարած հղումների հաշվին: Առավել մանրամասն տեղեկություն

ստանալու ջանքերը եղել են անօգուտ, քանի որ պարզվել է, որ այդ ժամանակաշրջանում տվյալների հավաքագրում չի իրականացվել, իսկ եղած տեղեկությունը չի պահպանվել<sup>33</sup> արդարադատության նախարարության շենքում տեղի ունեցած հրդեհի պատճառով:

Բարեփոխումների առաջին և երկրորդ փուլում խնդրահարույց է եղել մասնավորապես դատական իշխանության ինքնակառավարման մարմինների՝ մասնավորապես Արդարադատության խորհրդի կազմն ու ձևավորումը, ինչը արձանագրվել է նաև միջազգային կառույցների կողմից:

Արդարադատության խորհրդի հետ կապված հիմնական խնդիրն հանդիսացել է այն, որ այն ամբողջությամբ չի համապատասխանել դատական իշխանության անկախության ապահովման համար անհրաժեշտ գործառնության լիազորություններով: Մասնավորապես՝ ոչ այդ ժամանակ գործող Սահմանադրությունը, ոչ էլ Դատական օրենսգիրքը Արդարադատության խորհուրդը չեն դիտարկել որպես դատական իշխանության ինքնակառավարման մարմին<sup>34</sup>: Արդարադատության խորհրդի գործունեությունը գնահատվել է Եվրոպական դատավորների Խորհրդատական Խորհրդի (CCEJ) սահմանած չափորոշիչներով<sup>35</sup>, որի համաձայն՝ դատական իշխանության ինքնակառավարման մարմինները պետք է օժտված լինեն 10 հիմնական գործառնությամբ լիազորություններով.

1. Դատավորների ընտրություն և նշանակում,
2. Դատավորների առաջխաղացում,
3. Դատավորների գնահատում,
4. Դատավորների կարգապահական պատասխանատվություն և էթիկա,
5. Դատավորների ուսուցանում,
6. Առանձին բյուջեի վերահսկողություն և կառավարում,
7. Դատարանների գործունեության վարչարարություն և համակարգում,
8. Դատավորի հեղինակության պաշտպանություն,
9. Իշխանության այլ մարմիններին կարծիքի տրամադրում,
10. Հանրային պատասխանատվություն՝ գործունեության թափանցիկություն, հաշվետվողականություն և պատասխանատվություն:

---

<sup>33</sup> Հավելված 1,

<sup>34</sup> Eastern Partnership Systems PROJECT REPORT Judicial self-governing bodies Judges' Career, Strasbourg September of 2011, էջ 112

<sup>35</sup> Consultative Council of European Judges (CCJE) Opinion no.10(2007) of the Consultative Council of European Judges (CCJE) to the attention of the Committee of Ministers of the Council of Europe on the Council for the Judiciary at the service of society, Strasbourg 23 November 2007

2004 թվականի **Վենետիկյի հանձնաժողովի** գնահատմամբ՝ ՀՀ Արդարադատության խորհրդի առկայության փաստը դրական գնահատականի է արժանացել: Այնուամենայնիվ, ներկայացվել են նաև մտահոգություններ.

- ոչ դատավոր անդամները պետք է ընտրվեին Խորհրդարանի և ոչ թե հանրապետության նախագահի կողմից:
- Հանրապետության նախագահի կողմից Արդարադատության խորհրդի նիստերի նախագահումը հակասում է դատական իշխանության անկախության և իշխանությունների բաժանման սկզբունքին:
- Նախագահի կողմից բոլոր դատարանների նախագահների նշանակումը՝ առանց Արդարադատության խորհրդի ներգրավվածության<sup>36</sup> խնդրահարույց է:

2005 թվականի Սահմանադրական փոփոխություններով ներկայացված մտահոգությունները մասամբ կարգավորումներ են ստացել: Մասնավորապես, փոփոխության են ենթարկվել Արդարադատության խորհրդի կազմն ու ձևավորման կարգը:

Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում էին ՀՀ Դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, հանրապետության նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: Արդարադատության խորհրդի նիստերը վարում էր վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի<sup>37</sup>:

2005 թ. Սահմանադրական բարեփոխումների կապակցությամբ ներկայացված երկրորդ միջանկյալ կարծիքի մեջ **Վենետիկյան հանձնաժողովը** վերը ներկայացված խնդիրների ուղղությամբ ՀՀ իշխանությունների կողմից ձեռնարկված քայլերը մասամբ դրական է գնահատել:

Մասնավորապես, հանրապետության նախագահի կողմից Արդարադատության խորհրդի նախագահումը վերացնելը, խորհրդարանին ԱԽ կազմում 2 ոչ իրավաբան անդամ նշանակելու իրավասություն տրամադրելը, ինչպես նաև դատավորներին պաշտոնից ազատելու գործում ԱԽ լիազորություններ տրամադրելը գնահատվել<sup>38</sup> է դրական:

---

<sup>36</sup> European Commission For Democracy Through Law (Venice Commission) Interim Opinion On Constitutional Reforms In The Republic Of Armenia Adopted By The Venice Commission At Its 61st Plenary Session, Venice, (3-4 December 2004)

<sup>37</sup> ՀՀ Սահմանադրություն, հոդված 94.1, 2005 թվական

<sup>38</sup> European Commission For Democracy Through Law (Venice Commission) Second Interim Opinion On Constitutional Reforms In The Republic Of Armenia Adopted By The Venice Commission At Its 63rd Plenary Session (Venice, 10-11 June 2005)

Թեև Հանձնաժողովի վերջնական կարծիքով Արդարադատության խորհրդի կազմը գնահատվել է համապատասխան միջազգային չափանիշներին<sup>39</sup>, այնուամենայնիվ, դատավորներին նշանակելու և ազատելու հանրապետության նախագահի լիազորությունները դիտարկվել են մտահոգիչ: Այդ լիազորությունների իրականացման վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, ըստ Հանձնաժողովի, լրացուցիչ հստակեցման կարիք ունեն<sup>40</sup>:

Գործադիր իշխանությունից դատարանների անկախության ապահովման վերաբերյալ իր մտահոգությունն է հայտնել նաև ԳԲԵԿՈ-ն: Վերջինս 2006 թվականին ՀՀ իշխանություններին ուղղված զեկույցում խորհուրդ է տվել վերանայել դատական համակարգի հետ առնչվող կանոնները, որպեսզի դատավորական կորպորացիայի համար ապահովվի լրիվ անկախություն գործադիր իշխանության առաջ<sup>41</sup>:

2007 թվականին ընդունված Դատական օրենսգիրքը միավորեց դատական իշխանության ոլորտի օրենսդրական բոլոր կարգավորումները, և փոխարինեց նաև Արդարադատության խորհրդի մասին, Դատարանակազմության և Դատավորի կարգավիճակի մասին ՀՀ օրենքներին:

Սահմանադրական փոփոխություններով նախատեսված ԱԽ կազմի, կազմավորման ու գործառույթների առավել մանրամասն կարգավորումները տեղ գտան Դատական օրենսգրքի մեջ:

2007 թվականին ընդունված օրենսգրքով ընդգծվում էր, որ ԱԽ-ն համարվում է անկախ մարմին, սակայն ուղղակիորեն չէր նշվում, որ ԱԽ-ն դատական իշխանության ինքնակառավարման մարմին է:

Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով ԱԽ տրված լիազորությունները կենտրոնանում էին հիմնականում 2 կարևոր գործառույթի շուրջ՝ դատավորների նշանակում, առաջխաղացում, դատավորներին պաշտոնից ազատում և դատավորների կարգապահական պատասխանատվություն:

<sup>39</sup> Ըստ կարգավորումների՝ ԱԽ-ն կազմված է եղել 9 դատավորներից՝ ընտրված Դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ, հանրապետության նախագահի կողմից նշանակված 2 իրավաբան գիտնական և 2 իրավաբան գիտնական՝ նշանակված Խորհրդարանի կողմից

<sup>40</sup> European Commission For Democracy Through Law (Venice Commission) Final Opinion On Constitutional Reform In The Republic Of Armenia Adopted By The Venice Commission At Its 64th Plenary Session (Venice, 21-22 October 2005

<sup>41</sup> ԳԲԵԿՈ, Զեկույց Հայաստանի վերաբերյալ, 2006 թվական

ԱԽ աշխատակազմի գործառույթներն իրականացվում էր Դատական դեպարտամենտի կողմից: Վերջինս պատասխանատու էր նաև դատական ծառայության՝ օրենքով դատարաններին, ինչպես նաև դատական իշխանության մարմիններին վերապահված լիազորությունների ու գործառույթների իրականացման համար<sup>42</sup>:

Համաշխարհային Բանկի ֆինանսական աջակցությամբ իրականացված ծրագրային հաշվետվության մեջ Համաշխարհային Բանկը 2000 թվականի համեմատությամբ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները դրական է գնահատել: Մասնավորապես, Արդարադատության խորհրդի կազմում գործադիր իշխանության ներգրավվածության նվազումը, ինչպես նաև Դատավորների ընդհանուր ժողովի ստեղծումը, Դատարանների նախագահների խորհրդի գործառույթների վերանայումը<sup>43</sup> համարվել և դրական փոփոխություններ:

Դատական և իրավական բարեփոխումների էրրորդ՝ 2009-2011թթ. փուլի համար ընտրված էր 5 թիրախային ոլորտ, որտեղ կրկին կենտրոնական դեր ուներ *անկախ և հաշվետու արդարադատության ապահովումը*<sup>44</sup>:

Այս նպատակի ներքո դատարանների անկախության ապահովման համար առանձնացված է եղել 4 հիմնական միջոցառում: Վերջիններս են՝

- 1.1. Դատավորների նշանակման ընթացակարգերի կատարելագործում, Արդարադատության խորհրդի գործունեության սկզբունքների, ինչպես նաև թափանցիկության ապահովման և պիտանիության ու առաջխաղացման ցուցակների ձևավորման ընթացակարգերի վերանայում.
- 1.2. Օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի արդյանավետության բարձրացում.
- 1.3. Արդարադատության էթիկայի նորմերի պահպանման լիարժեք հետևողականության ապահովում.
- 1.4. Դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվության արդյունավետության, թափանցիկության և հրապարակայնության ապահովում:

---

<sup>42</sup> Հոդված 194, ՀՀ Դատական օրենսգիրք, 2007 թվական

<sup>43</sup> World Bank, Implementation Completion and Results Report for a Judicial Reform Project in Armenia, June 28, 2007

<sup>44</sup> ՀՀ Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարական գործողությունների ծրագիր և ծրագրից բխող միջոցառումներ, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=50926>

Բարեփոխումների ծրագրի և մասնավորապես ծրագրի միջոցառումների իրականացումը թիրախավորված ոլորտների և նպատակների առումով մեծ ձեռքբերումներ չի ապահովել:

Ծրագրի գործողությունների կատարման վերաբերյալ միջանկյալ և վերջնական հաշվետվություն չի ներկայացվել: Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում հասանելի է այս փուլի վերաբերյալ մեկ հետազոտություն՝ Դատախարարական բարեփոխումների 2-րդ ծրագրի վերաբերյալ Հանրային կարծիքի Մոնիթորինգ և հարցումներ վերտառությամբ: Վերջինս սակայն ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ որևէ տեղեկություն չի տրամադրում<sup>45</sup>:

Դատարանների անկախության խնդիրը շարունակել է արդիական մնալ նաև միջազգային կառույցների գնահատմամբ, մասնավորապես՝ իշխանությունների բաժանման համատեքստում<sup>46</sup>:

**2012-2016 թթ. դատախարարական բարեփոխումների ծրագրի** հայեցակարգը ևս կառուցվել է արդար և արդյունավետ դատական իշխանություն կառուցելու անհրաժեշտության շուրջ: Ծրագրի հիմնավորումներում ներկայացվել է, որ դեռևս արդիական է շարունակում մնալ դատական իշխանության անկախության խնդիրը թե՛ ներքին, թե՛ արտաքին մակարդակում՝ պայմանավորված ինչպես գործառույթային, այնպես էլ կառուցակարգային գործոններով<sup>47</sup>:

Ծրագիրը որպես նպատակ էր սահմանում արդար, արդյունավետ ու հանրության առջև հաշվետու դատական իշխանության ձևավորում: Այս նպատակի իրագործման համար որպես միջոց է դիտարկվել նաև դատավորների ինքնակառավարման առավել արդյունավետ մոդելի ներդրումը: Վերջինս իր հերթին ենթադրում էր հետևյալ գործողությունները՝

- 1.1. Վերանայել դատավորների ինքնակառավարման մարմինների կառուցվածքը, փոխհարաբերությունները, կազմը և գործառույթները՝ ապահովելով դատավորների ներքին անկախությունը և նպաստելով դատական իշխանության ինքնակառավարման երաշխիքների զարգացմանը:
- 1.2. Ապահովել դատավորների առավելագույն մասնակցություն սեփական ինքնակառավարմանը և նախատեսել նույն դատավորի կողմից, բացի

<sup>45</sup> ԱՄ ՓԱՐԹՆԸՐԶ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՔԱՄՓՆԻ ՍՊԸ, ԴՍԱԽԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 2 ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ, ՓՈԻԼ 2, Ապրիլ 2013, [http://www.moj.am/storage/uploads/JRP2\\_Monitoring\\_Report\\_Phase\\_2\\_arm.pdf](http://www.moj.am/storage/uploads/JRP2_Monitoring_Report_Phase_2_arm.pdf)

<sup>46</sup> Human Rights Council Fifteenth session Agenda item 6 Universal Periodic Review Report of the Working Group on the Universal Periodic Review, Armenia, 2010

<sup>47</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76932>



ընդհանուր ժողովից, միաժամանակ ինքնակառավարման մի քանի այլ մարմիններում ընդգրկված լինելու ողջամիտ սահմանափակումներ:

- 1.3. Ուսումնասիրել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետի սահմանափակում ներդնելու նպատակահարմարությունը՝ դատարանների նախագահների լիազորությունների սահմանափակման համատեքստում:

Սույն ծրագրից բխող միջոցառումների կատարման վիճակի վերաբերյալ արդարադատության նախարարության կողմից ներկայացվել է հաշվետվություն, ինչը սակայն ներկայացրել է որպես մինչև 2016 թվականի նոյեմբերի 30-ը կատարված աշխատանքների վերաբերյալ արդյունքներ<sup>48</sup>: Ըստ այդմ, միջոցառումների կատարումը Նախարարությունը գնահատել է որպես ամբողջությամբ կատարված, մասնակի կատարված և չկատարված:

Այդ չափանիշով գնահատման արդյունքում հաշվետվության մեջ ներկայացվել է թվով ընդհանուր 67 միջոցառման կատարողական վերաբերյալ տեղեկություն: Այդ 67 միջոցառումներից՝

- 2ի կատարվել 7-ը.
- Ամբողջությամբ կատարվել է 29-ը.
- Մասնակի կատարվել է 31-ը.

Հատկանշական է, որ որպես հիմնավորում չկատարված միջոցառումների համար մեծամասամբ ներկայացվել է ֆինանսական միջոցների բացակայությունը, սակայն հաշվետվության մեջ որևէ տվյալ չկա բյուջեով նախատեսված ընդհանուր ֆինանսական հատկացումների ու ծախսերի մասին և թե հավելյալ ինչքան ֆինանսական միջոցների անհրաժեշտություն է եղել: Ինչ վերաբերում է մասնակի կատարված միջոցառումներին, ապա դրանք հետաձգվել են մինչև 2017 թվականը:

Այսպես, հաշվի առնելով 2012-2016թթ. ծրագրի թերացումներն ու միջոցառումների իրագործման բացթողումները, 2016թ. նոյեմբերի 30-ի ՀՀ նախագահի հրամանագրով ծրագրի իրագործման վերջնաժամկետը հետաձգվել է մինչ 2017 թվականը<sup>49</sup>: Ընդհանուր առմամբ, նախատեսված շուրջ 130 միջոցառումներից 49-ը տեղափոխվել է կատարման 2017 թվական, ինչը


---

48ՀՀ իրավական եվ դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների 2016 թվականին կատարման վիճակի վերաբերյալ հաշվետվություն [http://moj.am/storage/files/legal\\_acts/legal\\_acts\\_8318762527991\\_002\\_2016-tarekanpdf.pdf](http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_8318762527991_002_2016-tarekanpdf.pdf)

49 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ Նախագահի 2012թ. հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2017 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ծրագրից բխող 2017 թվականի համար նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ [http://moj.am/storage/files/legal\\_acts/legal\\_acts\\_145550184671\\_tarekan-hashvetvutyun-2017-datairavakan.pdf](http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_145550184671_tarekan-hashvetvutyun-2017-datairavakan.pdf)

կազմում է գործողությունների շուրջ 38%-ը: Հետաձգված ծրագրի շրջանակներում միջոցառումների կատարողականը, ըստ ԱՆ հաշվետվության, ունի հետևյալ պատկերը՝

- Չի կատարվել 11 գործողություն.
- Կատարվել է ամբողջությամբ 21 գործողություն.
- Մասնակի է կատարվել 14 գործողություն<sup>50</sup>.



Ինչ վերաբերում է հատկապես ինքնակառավարման մոդելի ուժեղացմանն ու արդյունավետության բարձրացմանը, ապա պրակտիկայում այդ շրջանի համար փոփոխություններ չեն արձանագրվել: Պատասխանատու մարմինների կողմից այս նպատակի ներքո նույնպես միջոցառումների կատարման հաշվետվություն չի ներկայացվել:

Այս ծրագրի ընթացքում երկրում նախաձեռնվեց նաև Սահմանադրական բարեփոխումների հերթական փուլը: 2015 թվականի Սահմանադրական բարեփոխումների արդյունքում, ի թիվս այլ փոփոխությունների, օրենքով փոխվեց դատավորի կարգավիճակը, դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները, դատավորների ընտրության և նշանակման կարգը, ՀՀ վճռաբեկ դատարանի կարգավիճակը: Ավելին, դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորելու նպատակով սահմանադրական մակարդակով ամրագրվել են Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ պետական մարմնի կազմը և Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման կարգը, վերջինիս լիազորությունները: Հստակ ամրագրում են ստացել դատավորի կարգավիճակի օրենսդրական երաշխիքները, դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները, նրանց ընտրության և նշանակման կարգը:

<sup>50</sup> [http://moj.am/storage/files/legal\\_acts/legal\\_acts\\_145550184671\\_tarekan-hashvetvutyun-2017-datairavakan.pdf](http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_145550184671_tarekan-hashvetvutyun-2017-datairavakan.pdf)

ԲԴԽ ձևավորումը ինքնին դրական է գնահատվում, սակայն պրակտիկայում արդեն իսկ ներկայացվում են մտահոգություններ ինչպես դրա կազմի ու անդամների, այնպես էլ ձևավորման ու գործառույթների և մասնավորապես իրականացրած գործունեության կապակցությամբ<sup>51</sup>:

Վերոգրյալով պայմանավորված՝ նախորդող տարիներին արձանագրված խնդիրները լուծում չեն ստացել և կրկին հայտնվել են միջազգային կառույցների հանձնարարականներում:

**2014 թվականին ՏՀԶԿ կողմից ՀՀ** իշխանություններին խորհուրդ է տրվել ստեղծել մեխանիզմ, որը թույլ կտա դատավորներին հավասար մասնակցություն ունենալ դատական իշխանության ինքնակառավարման մարմիններում, հստակեցնել նման մարմինների դերը<sup>52</sup>:

**2014 թվականին ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններին և հատուկ գործընթացների շրջանակներում ՀՀ ներկայացված զեկույցների հիման վրա ՀՊԴ-ն** արձանագրել է, որ դատական և իրավական բարեփոխումների 2012-2016թթ ծրագիրը չի ներառել դատական իշխանության անկախությունն ապահովելու համար ներպետական օրենսդրությունը փոխելու հանձնարարականի իրականացումը<sup>53</sup>:

**2014 թվականին Վենետիկյան հանձնաժողովի** կողմից ՀՀ վերաբերյալ տրված նախնական կարծիքի մեջ դատական իշխանության կապակցությամբ արտահայտվել է հետևյալը՝ «հիմնական խնդիրը կապված է դատական իշխանության անարդյունավետության հետ, ինչը բացատրվում է գործառնական անհստակություններով, կառուցվածքային անկայունությամբ և դատարանների ոչ բավարար անկախությամբ, ինչպես նաև դատական գործընթացների թերություններով: Սրանով է պայմանավորված նաև դատարանների հանդեպ եղած ցածր վստահելիության աստիճանը»:

Ըստ այդմ, առանձնացվել է մի քանի ոլորտ, որոնք պետք է վերանայվեն՝ ԱԽ դերի և գործունեության արդյունավետության բարձրացում, դատական համակարգի վերանայում և Սահմանադրական դատարանի դերի բարելավում: ԱԽ կապակցությամբ նշվել է մասնավորապես, որ վերջինս պետք է բավարար

---

<sup>51</sup><http://prwb.am/new/hy/2018/10/26/%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84-%D5%A2%D5%A1%D6%80%D5%B1%D6%80%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%B5%D5%B6-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AD%D5%B8%D6%80%D5%B0%D6%80-2/>

<sup>52</sup> Organisation For Economic Co-Operation And Development Anti-Corruption Network For Eastern Europe And Central Asia Anti-Corruption Reforms In Armenia Round 3 Monitoring Of The Istanbul Anti-Corruption Action Plan, 2014

<sup>53</sup> Human Rights Council Working Group on the Universal Periodic Review Twenty-first session , 19–30 January 2015 Compilation prepared by the Office of the United Nations High Commissioner for Human Rights in accordance with paragraph 15 (b) of the annex to Human Rights Council resolution 5/1 and paragraph 5 of the annex to Council resolution 16/21 , Armenia

կառուցվածքային անկախություն ունենա, օժտված լինի սահմանադրական գործառույթներով, ինչը թույլ կտա ակտիվ դեր ունենալ դատական իշխանության անկախության և ինքնուրույնության ապահովման գործում: Ըստ այդմ, անհրաժեշտություն է նկատվել հստակեցնել ԱԽ կազմավորման կարգը, անդամները, լիազորություններն ու վերջինիս հարաբերությունները իշխանության այլ ճյուղերի և հանրապետության նախագահի հետ: Կազմի առնչությամբ հանձնաժողովի մոտեցումը հանգել է բալանսավորված ներկայացվածության՝ ներառելով տարբեր ատյանների ու դատարանների դատավորներ<sup>54</sup>:

**2015 թվականին ՀՊԴ աշխատանքային խմբի զեկույցը** կրկին անդրադարձել է դատական իշխանության անկախության հարցին: Մասնավորապես հանձնարարական է տրվել դատական իշխանության անկախությունը ապահովելու համար արդյունավետ քայլեր ձեռնարկելու համար և ստեղծել մարմին, որը պատասխանատվություն կկրի դատավորների նշանակման և առաջխաղացման համար<sup>55</sup>:

**2015 թվականին Վենետիկյան հանձնաժողովը** ՀՀ Սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ ներկայացրած առաջին կարծիքում մտահոգություն է հայտնել Բարձրագույն դատական խորհրդի կազմի ու անդամների վերաբերյալ՝ առաջարկելով դրանում ներգրավել նաև իրավաբան գիտնականների: Նմանապես, խնդրահարույց է դիտարկվել ԲԴԽ-ին տրված վարչական գործառույթներով, ինչը կարող է ազդել դատական իշխանության անկախության վրա<sup>56</sup>:

Նմանապես, Վենետիկյան հանձնաժողովի կողմից կարծիք ներկայացվել է նաև 2017 թվականին: Արդեն ՀՀ Դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ տրված կարծիքում Հանձնաժողովը արձանագրել է օրենսգրքի նախագծով սահմանված դրական փոփոխություններ՝ կապված Բարձրագույն Դատական խորհրդի և կոլեկտիվ այլ մարմինների ու ընդունված չափանիշների հետ վերջիններիս համապատասխանելիության առումով: Միննույն ժամանակ, նշվել է, որ օրենսգիրքը չափազանց երկար և մանրամասն փաստաթուղթ է և կարիք կա այն պարզեցնել: ԲԴԽ վերաբերյալ ներկայացվել են նաև որոշ մտահոգություններ: Մասնավորապես, կապված կազմի, դրա բազմազանության, խորհրդի գործառույթների վերաբերյալ<sup>57</sup>:

---

<sup>54</sup> European Commission For Democracy Through Law (Venice Commission) Opinion On The Draft Concept Paper On The Constitutional Reforms Of The Republic Of Armenia Adopted By The Venice Commission At Its 100th Plenary Session (Rome, 10-11 October 2014)

<sup>55</sup> Human Rights Council Twenty-ninth session Agenda item 6 Universal Periodic Review Report of the Working Group on the Universal Periodic Review, Armenia, 2015

<sup>56</sup> First Opinion1 On The Draft Amendments To The Constitution (Chapters 1 To 7 And 10) Of The Republic Of Armenia Endorsed By The Venice Commission At Its 104th Plenary Session (Venice, 23-24 October 2015) European Commission For Democracy Through Law (Venice Commission) Preliminary Opinion On The Draft Amendments To Chapters 1 To 7 And 10 Of The Constitution Of The Republic Of Armenia

<sup>57</sup> <sup>57</sup> European Commission For Democracy Through Law (Venice Commission) Armenia Opinion On The Draft Judicial Code Adopted By The Venice Commission At Its 112th Plenary Session (Venice, 6-7 October 2017)

## 1.2. Ինքնակառավարման մարմինների գործառույթները և դրանց արտացոլումը ՀՀ Դատախրավական բարեփոխումների ծրագրերում

### 1.2.1. դատավորների նշանակում, առաջխաղացում

### 1.2.2. դատավորների կարգապահական պատասխանատվություն

Ինչպես ներկայացվեց նախորդ գլխում՝ դատական իշխանության ինքնակառավարման մարմինների նպատակն է դատավորների անկախության և դատարանների ինքնուրույնության ապահովումը պետական իշխանության այլ ճյուղերի անհարկի ազդեցություններից: Ինքնակառավարման մարմինների դերը դրսևորվում է հատկապես այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են դատավորների ընտրությունն ու նշանակումը և կարգապահական պատասխանատվության հարցերը<sup>58</sup>: Ըստ այդմ՝ տարբերում են դատական խորհուրդների երկու հիմնական մոդելներ՝

- հարավ-եվրոպական մոդել, որի դեպքում խորհուրդը հիմնականում շեշտը դնում է դատական իշխանության կառավարման վրա, և
- հյուսիս-եվրոպական մոդել, որի դեպքում խորհուրդն ունի լիազորություններ վարչարարության, դատարանների կառավարման և բյուջետավորման հարցերում<sup>59</sup>:

Ընդհանուր առմամբ, դատական խորհուրդներն անձամբ կամ այլ մարմնի հետ համագործակցությամբ իրականացնում են հետևյալ գործառույթները՝

- Դատավորների ընտրություն և նշանակում.
- Դատավորների առաջխաղացում.
- Դատավորների գնահատում.
- Կարգապահական և էթիկայի հարցեր.
- Վերապատրաստում.
- Առանձին բյուջեի վերահսկողություն և կառավարում.
- Դատարանների ղեկավարում և կառավարում.
- Դատավորների կերպարի պաշտպանություն.
- Այլ պետական իշխանություններին կարծիքի տրամադրում.
- Հանրության առաջ պարտավորություններ՝ թափանցիկություն, հաշվետվողականություն և հաշվետվություն<sup>60</sup>:

<sup>58</sup> St 'u, European Network of Councils for the Judiciary, Report 2010-2011

<sup>59</sup> St 'u, Վենետիկյան հանձնաժողով, Դատարանների և դատավորների վերաբերյալ Վենետիկյան հանձնաժողովի կարծիքների ժողովածու, CDL-PI(2015)001, էջ 56

▪ **Դատավորների պաշտոնի նշանակում**

ԵՄ շրջանակներում ընդունվել են բազմաթիվ փաստաթղթեր, որոնցով սահմանվում են դատավորների նշանակման ընդհանուր մոտեցումներն ու ընդունված չափանիշները: Այս առնչությամբ առանձնակի կարևորություն ունի ԵՄ (2010)12 հանձնարարականը: Վերջինիս համաձայն՝ դատավորների ընտրության հարցերը պետք է հիմնված լինեն օրենքով կամ իրավասու մարմինների կողմից սահմանված օբյեկտիվ չափանիշների վրա: Ըստ այդմ, ընտրության որոշումները հիմնվում են թեկնածուի արժանիքների, որակումների, կարողությունների ու հմտությունների վրա՝ հաշվի առնելով, թե ինչքանով է թեկնածուն ունակ գործը քննել օրենքի կիրառմամբ ու մարդու իրավունքները հարգելով<sup>61</sup>: Արդարադատության խորհուրդների եվրոպական ցանցի կողմից նույնպես արտահայտվել է նմանատիպ մոտեցում, որի համաձայն՝ նշանակման որոշումները պետք է ընդունվեն օբյեկտիվ ու նախապես որոշված չափանիշների հիման վրա, զերծ լինեն ցանկացած տեսակի քաղաքական կողմնապահությունից կամ ցանկացած այլ ազդեցությունից<sup>62</sup>:

Վենետիկյան հանձնաժողովի կարծիքներից մեկում այս առնչությամբ արտահայտվել է նաև մոտեցում, ըստ որի՝ քանի որ դատավորների նշանակումը կարևոր է նրանց անկախությունն ու անկողմնակալությունը երաշխավորելու համար, խորհուրդ է տրվում, որ նշանակման կարգը մանրամասն նկարագրվի Սահմանադրությամբ<sup>63</sup>: Հանձնաժողովը կարևորել է դատավորների թեկնածուների ընտրության չափանիշների հստակությունը: Ինչը պայմանավորված է նրանով, որ հասկանալի լինի, թե ինչպես է հնարավոր, որ լավագույն կամ ցուցակների առաջին տեղերի թեկնածուները չեն նշանակվում դատավորի պաշտոնում, այլ նշանակվում է ավելի քիչ միավոր ունեցող դատավորը<sup>64</sup>:

Դատավորների նշանակման գործընթացում պատասխանատու մարմնի կապակցությամբ ընդհանուր մոտեցումը հանգում է նրան, որ մարմինը, որը որոշում է կայացնում դատավորների ընտրության և առաջխաղացման վերաբերյալ, պետք է կառավարությունից անկախ լինի<sup>65</sup>: Վենետիկյան

---

<sup>60</sup> ԵԴԽԽ, Կարծիք թիվ 10(2007) Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի ուշադրությանը դատական խորհրդի մասին որպես հանրային ծառայություն, 42-րդ կետ

<sup>61</sup> <https://rm.coe.int/16807096c1> , Recommendation CM/Rec (2010)12 and explanatory memorandum

<sup>62</sup> OSCE, Human Dimension Meeting, Strengthening Judicial Independence

And Public Access To Justice, Working Group I: Judicial Administration With A Special Focus On Judicial Councils

<sup>63</sup> CDL-AD(2008)010, Opinion on the Constitution of Finland

<sup>64</sup> Opinion No905/2017, on the former Yugoslav Republic of Macedonia

<sup>65</sup> Ibid 2, Ibid 4, ibid 5, 9, ibid 20,

հանձնաժողովը այն կարծիքին է, որ նշանակման գործընթացում որոշիչ դեր պետք է ունենան Արդարադատության խորհուրդները, քանի որ նման փորձագիտական և անկախ մարմնի դերը ընտրության հարցում ավելի ընդունելի է<sup>66</sup>: Դատական խորհուրդներից պահանջվում է ցուցաբերել թափանցիկության բարձր մակարդակ ինչպես դատավորների, այնպես էլ լայն հանրության նկատմամբ, ինչի ապահովման համար անհրաժեշտ է ունենալ կանխատեսելի գործընթացներ ու պատճառաբանված որոշումներ ընդունել<sup>67</sup>:

▪ **Դատավորների կարգապահական պատասխանատվության նկատմամբ ընդհանուր մոտեցումները**

Որպես կանոն՝ դատավորները անձնական պատասխանատվություն չեն կրում իրենց կայացրած որոշումները բեկանվելու կամ փոխվելու համար: Նմանապես, դատավորները չպետք է պատասխանատվության ենթարկվեն իրենց որոշումների կամ վճիռների բովանդակության, այդ թվում՝ տարբեր դատարանների կողմից իրավական նորմերի տարաբնույթ մեկնաբանության, դատական սխալների կամ դատարանների քննադատության համար<sup>68</sup>:

*Վենետիկյան հանձնաժողովը* կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում առանձնակի կարևորում է պատասխանատվության ենթարկելու հիմքերի հստակության հարցը<sup>69</sup>: Վենետիկյան հանձնաժողովը վկայակոչում է, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու կանոններն ուղղակիորեն ազդում են դատավորների անկախության վրա: Լայն և ոչ հստակ սահմանումները մեծացնում են դրանց մեկնաբանության և չարաշահման հնարավորությունները, ինչը կարող է վտանգավոր լինել դատավորների անկախության համար: Հետևաբար, խորհուրդ է տրվում սահմանել առավել կոնկրետ հիմքեր կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Միննույն ժամանակ անհնար է ակնկալել, որ օրենսդիր մարմինը կկարողանա հստակ և սպառիչ թվարկել անընդունելի վարքագծի բոլոր դրսևորումները:

---

Report On The Independence Of The Judicial System Part I: The Independence Of Judges Adopted By The Venice Commission At Its 82nd Plenary Session (Venice, 12-13 March 2010)

<sup>66</sup> CDL-AD(2003)019, Opinion on three Draft Laws Proposing Amendments to the Constitution of Ukraine

European Commission For Democracy Through Law

(Venice Commission), Cdl(2010)006 \*

Or. Engl.

<sup>67</sup> Recommendation CM/Rec (2010)12 and explanatory memorandum

<sup>68</sup> Տես նույն տեղում

<sup>69</sup> Venice Commission, Opinion No. 893/2017, on the draft judicial Code of Armenia, 2017

On The Law 29/1967 Concerning The Judicial System, The Supreme Council Of The Judiciary, And The Status Of Judges In Tunisia

(As Amended Up To 12 August 2005)

Կարգապահական պատասխանատվության և կիրառվող միջոցների մասով հանձնաժողովը սահմանել է նաև, որ պետք է հստակ լինեն կայացված որոշումների բողոքարկման մեխանիզմներն ու ընթացակարգերը<sup>70</sup>: Վենետիկյան հանձնաժողովը այս առումով կարևորում է, որպեսզի բողոքարկման մարմինը օրենքով սահմանված լինի: Որոշումները պետք է այնպիսի մարմնի կողմից վերանայվեն, որը անկախ է և ապահովում է դատական գործընթացների բոլոր երաշխիքները<sup>71</sup>:

Պատասխանատվության ենթարկելու իրավասությունը պետք է տրվի հատուկ մարմնին, որը կունենա բողոքները լսելու և քննելու լիազորություն: Որոշումը յուրաքանչյուր դեպքում պետք է կայացվի անկախ մարմնի կողմից: *Կիևյան սկզբունքների համաձայն՝* պետք է գոյություն ունենա դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներում որոշումներ կայացնող հատուկ անկախ մարմին (դատարան, հանձնաժողով կամ խորհուրդ): Դատավորների կարգապահությանն առնչվող խնդիրներով որոշումներ կայացնող մարմինները չպետք է կարգապահական վարույթներ հարուցելու իրավունք ունենան: Ավելին, դրանց կազմում չպետք է լինեն այնպիսի անդամներ, ովքեր օժտված կլինեն կարգապահական վարույթներ հարուցելու իրավասությամբ<sup>72</sup>: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր հերթին ընդունել է, որ այն դեպքում, երբ դատարանի անդամների առնվազն կեսը դատավորներ են, ներառյալ նախագահողը, ով ունի վճռորոշ ձայնի իրավունք, ապա նման իրավիճակն անկողմնակալության լուրջ ինդիկատոր է: Հատկապես կարգապահական վարույթների գործերով կազմի էական մասը պետք է լինեն դատավորներ<sup>73</sup>:

### **1.2.3. Դատավորների պաշտոնի նշանակման և կարգապահական պատասխանատվության հիմնահարցերը ՀՀ-ում իրականացված դատաիրավական բարեփոխումների ծրագրերում**

Դատական իշխանության անկախության հարցը մշտապես եղել է արդիական, ինչը ներառել է տարբեր բաղադրատարրեր, մասնավորապես այդ համակարգի ներսում ինքնակառավարման մարմինների գործառույթների արդյունավետ

<sup>70</sup> Preliminary opinion on the Draft Law on Amending the law on the Judicial system and the status of judges of Ukraine, no 792/2015

<sup>71</sup> Venice Commission Opinion on the laws on the Disciplinary Liability and evaluation of Judges of the Former Yugoslav Republic of Macedonia, No 825/2015

<sup>72</sup> Council Of Europe's Standards Of The Judicial And Prosecutorial Training And Nomination Process

<sup>73</sup> Oleksandr Volkov v . Ukraine, 09.01.2013

International Association Of Judges, The Universal Charter Of The Judge



իրականացումը: Դատավորների նշանակման և վերջիններիս նկատմամբ կարգապահական պատասխանատվության հիմնահարցերը իրականացված բարեփոխումների ծրագրերից անմասն չեն մնացել, ավելին, մշտապես եղել են կենտրոնական նշանակություն ունեցող հարցեր:

Այս առումով կարևոր են եղել նաև օրենսդրական կարգավորումները:

**Դեռևս 1995 թվականի Սահմանադրությամբ** դատավորների նշանակման, պաշտոնից ազատման և պաշտոնի առաջխաղացման հարցերը ենթակա էին լուծման հանրապետության նախագահի կողմից<sup>74</sup>: Արդարադատության խորհուրդը այս գործընթացում ուներ ֆորմալ դեր՝ արդարադատության նախարարի առաջարկով կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն էր ներկայացնում դատավորների պաշտոնեական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակները, որոնց հիման վրա կատարվում էին նշանակումները<sup>75</sup>:

Արդարադատության խորհուրդը պատասխանատու էր նաև դատավորների կարգապահական պատասխանատվության հարցերով: Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս Արդարադատության խորհրդի նիստերը վարում էր վճռաբեկ դատարանի նախագահը: Հանրապետության նախագահը, արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը այդ նիստերին չէին մասնակցում<sup>76</sup>:

2005 թվականի Սահմանադրական փոփոխություններով նույնպես սահմանվում էր նախագահի կողմից դատավորների նշանակման համակարգ: Մասնավորապես, հանրապետության նախագահը Արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում էր վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին, դադարեցնում է նրանց լիազորությունները, համաձայնություն է տալիս նրանց՝ որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ, Արդարադատության խորհրդի եզրակացությամբ նշանակում է վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների դատավորներին:

**2007 թվականի Դատական օրենսգիրքը** առավել մանրամասն ներկայացնում էր ինչպես դատավորների նշանակման, այնպես էլ կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերն ու հիմքերը:

Այսպես, օրենսգրքով նախատեսվում է, որ մրցութային կարգով որակավորման քննությունները հանձնած անձանց թեկնածությունները Արդարադատության

<sup>74</sup> ՀՀ Սահմանադրություն, 1995 թվական, հոդված 55

<sup>75</sup> Նույն տեղում, հոդված 95

<sup>76</sup> Նույն տեղում

խորհուրդն ուսումնասիրում է իր նիստում և հրավիրում զրույցի<sup>77</sup>: Թեկնածությունների ցուցակի լրացման նպատակով խորհուրդը այնուհետ անց է կացնում գաղտնի քվեարկություն: Եթե թեկնածուն ստացել է քվեարկության մասնակիցների ձայների կեսից ավելին, ապա նա ներկայացվում է հանրապետության նախագահին: Եթե հանրապետության նախագահը առաջարկությունը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, չի լրացնում դատավորների թեկնածությունների ցուցակը, ապա այդ թեկնածությունը համարվում է մերժված<sup>78</sup>:

ԱԽ ուներ ընդամենը դատավորների ցուցակները հանրապետության նախագահին ներկայացնելու լիազորություն: Վերջինիս կողմից դատավորին նշանակելու որևէ հստակ չափանիշ նախատեսված չի եղել, սակայն վերջնական որոշումը կայացվել է նախագահի կողմից:

Ինչ վերաբերում է դատավորների կարգապահական պատասխանատվության հարցին, ապա այն իրականացվում էր Արդարադատության խորհրդի կողմից<sup>79</sup>:

Կարգապահական պատասխանատվության հիմքերը հետևյալն էին՝ արդարադատություն իրականացնելիս նյութական օրենքի ակնհայտ և կոպիտ խախտումը, դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, աշխատանքային կարգապահությունը պարբերաբար կամ կոպիտ խախտելը, դատավորի կողմից վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերաբար խախտում թույլ տալը, օրենսգրքով սահմանված պարտականությունները չկատարելը, ինչպես նաև օրենսգրքով սահմանված կարգով էթիկայի հանձնաժողովին արդարադատության և օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման կապակցությամբ իր գործունեության միջամտելու կամ օրենքով չնախատեսված այլ ներգործության մասին չհայտնելը<sup>80</sup>: Օրենսգրքով սահմանված ընթացակարգի համաձայն՝ առաջին աստիճանի դատարանների դատավորի և դատարանի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեն արդարադատության նախարարը և Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը: Ինչ վերաբերում է վճռաբեկ դատավորներին, ապա վարույթ հարուցելու իրավունք ունեին վճռաբեկ դատարանի նախագահն ու Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը՝ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի միջնորդությամբ<sup>81</sup>:

Անդրադառնալով պրակտիկային՝ պետք է նշել, որ կարգապահական պատասխանատվության ինստիտուտը կիրառվել է սոսկ որպես դատավորներին

<sup>77</sup> ՀՀ Դատական օրենսգրք, 2007 թվական, հոդված 117

<sup>78</sup> Նույն տեղում, հոդված 117

<sup>79</sup> Նույն տեղում, հոդված 153

<sup>80</sup> Նույն տեղում

<sup>81</sup> Նույն տեղում, հոդված 155

որոշ հարցերում զսպելու և ճնշելու միջոց: Ինչպես նշվել է փորձագետներից մեկի կողմից՝ վճռաբեկ դատարանի նախագահը իր հետ համաձայնություն չհայտնող դատավորների նկատմամբ որպես զսպող գործոն կիրառել է կարգապահական պատասխանատվության ինստիտուտը<sup>82</sup>:

Վերադառնալով դատական և իրավական ոլորտի բարեփոխումների ծրագրերին, պետք է նշել, որ 2009 թվականից իրականացված դատական և իրավական ոլորտի բարեփոխումների բոլոր 3 ծրագրերը ինչ-որ կերպ ներառել են դատավորների կարգապահական պատասխանատվության և պաշտոնի նշանակման հարցերը:

*2009-2011թթ. բարեփոխումների ծրագրով*, մասնավորապես, դատարանների անկախության ապահովման համար կարևոր միջոցառում էր հանդիսանում *դատավորների նշանակման ընթացակարգերի կատարելագործումը*, ինչպես նաև *առաջխաղացման ցուցակների ձևավորման ընթացակարգերի վերանայումը*, *նմանապես՝ դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվության արդյունավետության, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը*:

Այդ շրջանում, սակայն, օրենսդրությունն ու պրակտիկան փոփոխության չեն ենթարկվել:

*Ինչպես արդեն վերը նշվեց, այս փուլի ծրագիրը հաշվետվողականություն չի ապահովել, ինչով պայմանավորված՝ արձանագրված և միջոցառումների հիմքում ընկած խնդիրները շարունակվել են, ինչի մասին իրավացիորեն նշվել է նաև բարեփոխումների 2012-2016թթ. ծրագրի հիմնավորումներում: Մասնավորապես, 2012-2016թթ ծրագիրը բավարար և ամբողջական չի համարել դրան նախորդած ծրագրի և համապատասխան միջոցառումների իրագործումը<sup>83</sup>: Վերջինս կրկին արձանագրել է դատական իշխանության արդյունավետության ու անկախության խնդիրները, իսկ անկախության սահմանափակումները դիտարկել որպես թե արտաքին, թե ներքին ներգործության հետևանք, պատճառները՝ ինչպես գործառության, այնպես էլ կառուցակարգային բնույթի:*

Ըստ այդմ, առկա խնդիրները լուծելու համար սույն ծրագիրը առանձնացրել էր նպատակային թիրախավորված ոլորտներ, որտեղ կրկին կենտրոնական դեր ուներ արդար, արդյունավետ և հանրության առջև հաշվետու դատական իշխանության ապահովումը:

<sup>82</sup> REPORT BY NILS MUIŽNIEKS COMMISSIONER FOR HUMAN RIGHTS OF THE COUNCIL OF EUROPE FOLLOWING HIS VISIT TO ARMENIA FROM 5 TO 9 OCTOBER 2014

[https://rm.coe.int/ref/CommDH\(2015\)2](https://rm.coe.int/ref/CommDH(2015)2), կետ 25

<sup>83</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76932>

Այս նպատակի ներքո ծրագիրը նախատեսել էր թվով 52 միջոցառում՝ խմբավորված առանձին ոլորտներում: Վերջիններիս մեջ, ի թիվս այլնի, դիտարկվում էին նաև հետևյալ գործողությունները՝

1. Մշակել դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկելու համար թեկնածուների առաջադրման թափանցիկ և օբյեկտիվ ընթացակարգեր, այդ թվում՝ վերանայել Արդարադատության խորհրդում հարցազրույցի կարգը՝ հստակեցնելով այդ փուլի խնդիրներն ու թեման:
2. Բարեփոխել Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերն ու հիմքերը:
3. Տարանջատել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող և կարգապահական տույժի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտներին՝ որպես կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտներ նախատեսելով արդարադատության նախարարին ու դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին, վճռաբեկ դատարանի պալատի դատավորի և պալատի նախագահի նկատմամբ՝ վճռաբեկ դատարանի նախագահին, իսկ էթիկայի կանոնների խախտման հիմքով՝ նաև դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին:
4. Ուսումնասիրել հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում դատավորի անկախության և պաշտպանվածության օրենսդրական երաշխիքների ամրապնդման հարցը:
5. Ուսումնասիրել հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում դատավորի անկախության և պաշտպանվածության օրենսդրական երաշխիքների ամրապնդման հարցը:
6. Ուսումնասիրել ԱԽ նիստերի դռնբացության խնդիրը՝ ըստ անհրաժեշտության նախատեսելով օրենսդրական փոփոխություններ:
7. Հստակեցնել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը՝ հնարավորինս բացահայտելով նյութական և դատավարական օրենքների ակնհայտ և կոպիտ խախտումների բովանդակությունը:
8. Ուսումնասիրել նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման համար դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ԱԽ որոշումը՝ որպես նոր երևան եկած հանգամանք նախատեսելու հարցում միջազգային փորձը և սահմանել անհրաժեշտ կարգավորումներ:
9. Ապահովել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության արդյունավետությունն ու թափանցիկությունը:

*Դատական և իրավական բարեփոխումների 2018-2023 թթ. ռազմավարության մշակման հիմքում դրվել է դատաիրավական ոլորտում բարեփոխումների ռազմավարական պլանավորման, մշտադիտարկման, հաշվետվողականության և առաջընթացի պարբերական գնահատման անհրաժեշտությունը, ինչը պետք է ապահովի այս ոլորտի զարգացումը:*

Դատական և իրավական բարեփոխումների 2018-2023 թվականների ռազմավարությունը, որպես ոլորտի զարգացման շարունականությունն ապահովող համապարփակ ծրագիր, նախորդ բարեփոխումների արդյունքների վերլուծության հիման վրա ոլորտում դեռևս առկա խնդիրների հաշվառմամբ՝ նախատեսում է դրանց նոր լուծումներ կամ լուծման նոր մեթոդներ: Այդ խնդիրներից են՝ դատական իշխանության լիարժեք անկախության ապահովում, կոռուպցիոն երևույթների վերացում, դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտի արդյունավետ կիրառում, դատավորների պաշտոնի նշանակման և առաջխաղացման կարգավորումների արդյունավետության բարձրացում և այլ հարցեր<sup>84</sup>: Հատկանշական է, որ ինչպես կարգապահական պատասխանատվության, այնպես էլ դատավորների նշանակման հարցը հերթական անգամ ներառված է ծրագրում՝ որպես բարեփոխումների պահանջող կարևոր ոլորտ:

Սույն ծրագրի նախատեսված միջոցառումների և արդյունքների մասին հավելյալ տեղեկություն տրամադրել հնարավոր չէ, քանի որ ծրագիրը ուսումնասիրությունը ներկայացնելու պահին դեռևս ընդունված չէ:

Չնայած օրենսդրությամբ սահմանված դրույթներին, ինչպես նաև վերոնշյալ ծրագրերով ձեռնարկված քայլերին ու միջոցառումներին՝ իրավիճակը տեսականում և պրակտիկայում մտահոգիչ է եղել և ոչ բավարար, ինչը բազմիցս արձանագրվել է միջազգային կառույցների կողմից ներկայացված՝ պարբերական բնույթ կրող և կրկնվող հանձնարարականներով:

Այսպես, հիմք ընդունելով կարգապահական պատասխանատվության վերաբերյալ ներպետական օրենսդրությունը և մասնավորապես այն դրույթները, համաձայն որի՝ արդարադատության նախարարը կարող է դատավորի դեմ կարգապահական վարույթ նախաձեռնել, ՏՀԶԿ-ն իր մտահոգություն է հայտնել ՀՀ իշխանություններին երկրում գործադիր և դատական իշխանության բաժանման սզկբունքի վերաբերյալ<sup>85</sup>:

<sup>84</sup> <https://www.e-draft.am/projects/594>

<sup>85</sup> OECD Anti-Corruption Network for Eastern Europe and Central Asia Istanbul Anti-Corruption Action Plan Second Round of Monitoring Armenia, 2011

2014 թվականին հերթական գնահատման արդյունքում **ՏՀԶԿ** կողմից ՀՀ իշխանություններին են ներկայացվել հետևյալ առաջարկությունները՝

- Շարունակել Սահմանադրական բարեփոխումները և ապահովել դրա պատշաճ կիրառումը՝ նպատակ հետապնդելով երաշխավորել իշխանությունների բաժանումն ու դատարանների անկախությունը, ներառյալ դատավորների թեկնածուների ներկայացումն ու պաշտոնի նշանակումը.
- Վերանայել դատավորների կարգապահական պատասխանատվության հիմքերը՝ վերջիններս դարձնելով ավելի հստակ և պարզ, ինչը կհամապատասխանի միջազգային սկզբունքներին.
- Ապահովել կարգապահական վարույթների համապատասխանելիությունը արդար դատաքննության երաշխիքներին և դատավորներին պաշտպանության բավարար հնարավորություններ տալ<sup>86</sup>:

2015 թվականի հերթական անդրադարձում ներկայացված հանձնարարականների առնչությամբ **ՏՀԶԿ-ն արձանագրել է** որոշակի առաջընթաց: Սակայն շեշտվել է միևնույն ժամանակ, որ ոչ բոլոր առաջարկներն են ամբողջությամբ իրականացվել և դեռևս հետագա գործողությունների անհրաժեշտություն կա<sup>87</sup>:

**2014 թվականին ՄՄԿ-ի պայմանագրային մարմիններին և հատուկ գործընթացների շրջանակներում ՀՀ ներկայացված զեկույցների հիման վրա ՀՊԴ-ն արձանագրել է** հետևյալ հիմնախնդիրները, Մասնավորապես՝

- Մարդու իրավունքների կոմիտեն անհանգստություն է հայտնել երկրում դատական իշխանության անկախության բացակայության վերաբերյալ, ինչպես նաև դատավորների նշանակման մեխանիզմի վերաբերյալ, ինչը քաղաքական ճնշումներ է ներառել: Ըստ այդմ առաջարկվել է ներպետական օրենսդրությունը փոխել այնպես, որ երաշխավորվի դատական իշխանության անկախությունը օրենսդիր ու գործադիր իշխանություններից, հիմնադրել անկախ մարմին, որը կերաշխավորի դատավորների նշանակումն ու առաջխաղացումը<sup>88</sup>:

Կոմիտեն նշել է նաև, որ Դատական և իրավական բարեփոխումների 2012-2016թթ ծրագիրը չի ներառել դատական իշխանության անկախությունն

<sup>86</sup> Organisation For Economic Co-Operation And Development Anti-Corruption Network For Eastern Europe And Central Asia Anti-Corruption Reforms In Armenia Round 3 Monitoring Of The Istanbul Anti-Corruption Action Plan, 2014

<sup>87</sup> Istanbul Anti-Corruption Action Plan Third Round Of Monitoring Armenia Progress Update, 2015

<sup>88</sup> CCPR/C/ARM/CO/2, para 21

ապահովելու համար ներպետական օրենսդրությունը փոխելու հանձնարարականի իրականացումը<sup>89</sup>:

2015 թվականին կրկին **ՀՊԴ** աշխատանքային խմբի զեկույցը կրկին անդրադարձել է դատական իշխանության անկախության հարցին: Մասնավորապես հանձնարարական է տրվել դատական իշխանության անկախությունը ապահովելու համար արդյունավետ քայլեր ձեռնարկելու համար և ստեղծել մարմին, որը պատասխանատվություն կկրի դատավորների նշանակման և առաջխաղացման համար<sup>90</sup>:

Նմանապես, **ԳՐԵԿՈ-ի** կողմից Հայաստանի վերաբերյալ ներկայացված զեկույցում նշվել է, որ 2014 թվականին իրականացված բարեփոխումները չեն համարվել արձանագրված խնդիրների վերջնական լուծումները և դեռևս կան անելիքներ, ինչը ներառում է դատական իշխանության ինքնակառավարման մարմիններն ու դատավորների նշանակման գործընթացը: Այս առնչությամբ, հիշատակվել է այն հանգամանքը, որ մի շարք տեղական և միջազգային կառույցներ բազմիցս արտահայտել են իրենց մտահոգությունները դատական իշխանության վերաբերյալ: Մի կողմից նշվել է պրակտիկայում դատական իշխանության անկախության բացակայության մասին ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հարթություններում<sup>91</sup>: Արձանագրված խնդիրների կապակցությամբ ՀՀ իշխանություններին առաջարկվել է շարունակել դատական ինքնակառավարման մարմինների բարեփոխումները՝ նպատակ հետապնդելով ապահովել դատական իշխանության անկախությունը, ապահովել դատավորների ներկայացվածությունը ինքնակառավարման մարմիններում և նվազեցնել դատարանների նախագահների՝ հատկապես վճռաբեկ դատարանի նախագահի դերը ինքնակառավարման մարմիններում:

- Արգելել առանց իրենց համաձայնության դատավորների նշանակումները Դատարանների նախագահների խորհրդի կողմից.
- Վերանայել և բարեփոխել դատավորների նշանակման, առաջխաղացման և պաշտոնից ազատման գործընթացները՝ ուժեղացնելով դատական իշխանության դերը այդ գործընթացում և նվազեցնելով Հանրապետության

---

<sup>89</sup> Human Rights Council Working Group on the Universal Periodic Review Twenty-first session , 19–30 January 2015 Compilation prepared by the Office of the United Nations High Commissioner for Human Rights in accordance with paragraph 15 (b) of the annex to Human Rights Council resolution 5/1 and paragraph 5 of the annex to Council resolution 16/21 , Armenia

<sup>90</sup> Human Rights Council Twenty-ninth session Agenda item 6 Universal Periodic Review Report of the Working Group on the Universal Periodic Review, Armenia, 2015

<sup>91</sup> See the [Report of the Commissioner for Human Rights of the Council of Europe of 10 March 2015](#), paragraphs 16 and 19. See also the [Joint Opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights of the Council of Europe on the “Draft Law Amending and Supplementing the Judicial Code of Armenia \(Evaluation System for Judges\)”](#), CDL-AD(2014)007, paragraph 125 ([http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)007-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)007-e)).

նախագահի դերը, պահանջելով վերջինիցս հիմնավորված որոշումների կայացում, ապահովելով որ ցանակցած որոշում հնարավոր կլինի բողոքարկել դատական կարգով.

- Վերանայել կարգապահական պատասխանատվության գործընթացում Արդարադատության նախարարի դերը և բավարար երաշխիքներ տրամադրել դատավորներին, որպեսզի կարգապահական վարույթները չչարաշահվեն, դատավորներին հնարավորություն տալ դատական կարգով բողոքարկել նման որոշումները<sup>92</sup>:

2017թ. զեկույցում ՀՀ ներկայացված առաջարկների իրագործման մասով **ԳՆԵԿՈ**-ն դրական է գնահատվել նաև դատավորների նշանակման և պաշտոնից ազատման վերաբերյալ իրականացված փոփոխությունները, մասնավորապես ԲԴԽ տրված լիազորությունները և հանրապետության նախագահի կողմից մերժման որոշումները հիմնավորելու պարտավորությունը: Ինչ վերաբերում է որոշումները բողոքարկելու հնարավորությանը, նշվել է, որ սահմանված է ընթացակարգային հարցերով միայն Սահմանադրական դատարան դիմելու հնարավորություն, մինչդեռ բովանդակային հարցերով բողոքարկման հնարավորություն չկա, ինչը ամբողջությամբ չի արտացոլում իշխանությունների ներկայացված առաջարկի իրականացումը: Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացում արդարադատության նախարարի դերի կապակցությամբ նշվել է, որ չնայած փոփոխություններին՝ ԱՆ-ն շարունակում է դերակատարում ունենալ՝ մասնավորապես դատավորների դեմ կարգապահական վարույթ նախաձեռնելու գործում: Այս առումով կրկին նշվել է, որ գործադիր իշխանության դերակատարումը կարգապահական պատասխանատվության գործընթացներում կարող է դիտարկվել որպես անհամատեղելի դատական իշխանության անկախության ապահովման հետ<sup>93</sup>:

Կարելի է արձանագրել, որ տարիներ շարունակ ընթացող դատական և իրավական բարեփոխումների գործընթացի շրջանակներում տեղ գտած խնդիրները և դրանց ուղղված գործողություններն ու միջոցառումները մեծամասամբ կրկնվել են, ըստ այդմ տրվել են նաև կրկնվող հանձնարարակներ<sup>94</sup>:

<sup>92</sup> GRECO Eval IV Rep 2015, Armenia, Corruption prevention in respect of members of parliament, judges and prosecutors

<sup>93</sup> GRECO, Fourth Evaluation Round, Corruption prevention in respect of members of parliament, judges and prosecutors, Compliance report on Armenia, 2017

<sup>94</sup> Տես հավելված 2



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում դատական և իրավական բարեփոխումների շարունակական ծրագրերի իրականացումը միտված է եղել հասցեագրելու մեկ հիմնական խնդիր՝ մեծացնել դատական իշխանության անկախությունը:

Չնայած 23 տարիների ընթացքում իրականացրած 4 երկարաժամկետ ծրագրերի գործողություններին, դատական իշխանության անկախության խնդիրը շարունակում է հանդիսանալ Հայաստանում արդար դատաքննության իրացման առանցքային խոչընդոտ:

Սույն ուսումնասիրության շրջանակներում առանձնացված դատական իշխանության ինքնակառավարման մարմինների ու գործառույթների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների համեմատությունը հնարավորություն է տալիս առանձնացնել 3 խումբ պատճառներ, որոնք ազդեցություն են ունեցել դատական իշխանության անկախության մեծացմանն ուղղված գործողությունների արդյունքների վրա:

### Օրենսդրության և պրակտիկայի անհամապատասխանելիություն

Բարեփոխումների ծրագրի շրջանակներում իրականացված օրենսդրական փոփոխությունները հիմնականում համակարգային փոփոխության չեն հանգեցրել: Մի կողմից՝ դրանք պրակտիկայում ամբողջությամբ կիրառելիություն չեն ստացել, մյուս կողմից էլ օրենքներում կատարված փոփոխությունները վերաբերել են կոնկրետ խնդիրների, որոնց միջոցով հնարավոր չի եղել ապահովել բարեփոխումների ծրագրերով ակնկալվող արդյունքները:

Մասնավորապես՝ իրականացված բարեփոխումների երրորդ ծրագրից սկսած, դատավորների անկախության առնչությամբ օրենսդրական փոփոխությունները միտված են եղել վերացնել անկախության հնարավոր սահմանափակումները: Այնուամենայնիվ, դատավորների նշանակման և պաշտոնից ազատման գործում հանրապետության նախագահի ունեցած վճռական դերը շարունակել է դատավորների անհատական անկախության վրա մեծ ազդեցություն ունենալ:

2015 թվականի Մահմանադրական փոխություններով թեև նախագահի դերը նվազեցվել է, այնուամենայնիվ, ընդհանուր համակարգի փոփոխության՝ այդ դերակատարման նվազեցմանը չի հանգեցրել:

Իրականացված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դատավորների անկախության հետ կապված խնդիրների գերակշիռ մասը շարունակվում է օրենսդրական այնպիսի խնդիրների առկայության հետևանքով,

ինչպիսիք հանդիսանում են, օրինակ, դատավորների կարգապահական պատասխանատվության համակարգը, դրան առնչվող իրավական կարգավորումների անհստակությունը, կիրառման պրակտիկան:

Ընդհանուր առմամբ, դատական և իրավական ծրագրերի արդյունավետությունն էականորեն կախված է եղել նաև դրա շրջանակներում իրականացված օրենսդրական փոփոխությունների պրակտիկ կիրառելիությունից:

Ավելին՝ ուսումնասիրությունը վեր է հանել նաև, որ նույնիսկ օրենսդրական փոփոխություններն ամբողջությամբ չեն արտացոլել պրակտիկայում գոյություն ունեցող իրական խնդիրները կամ չեն ներառել դրանց առնչությամբ ներկայացված միջազգային առաջարկությունները, խորհրդատվական կարծիքները:

### *Ծրագրային միջոցառումների կրկնություններ*

Դատական և իրավական բարեփոխումների ծրագրերի ուսումնասիրությունը փաստում է, որ տարիների վեր ընթացող գործընթացի շրջանակներում տեղ գտած խնդիրները և դրանց ուղղված գործողությունները, միջոցառումները կրկնվել են. օրինակ, դատավորների նշանակման, կարգապահական պատասխանատվության ինստիտուտի և Արդարադատության խորհրդի գործունեությանն առնչվող խնդիրները, դրանց վերաբերող միջոցառումների ծրագրերը: Թեև խնդիրների ծավալը և ծանրակշռությունը ենթադրում են շարունակական գործողություններ և հետևողականություն, այնուամենայնիվ, այս պարագայում, դրանք արդյունքների արդյունավետություն չեն ապահովել:

Որպես օրինաչափություն՝ նախորդին հաջորդող ծրագրերը, կրկնվող թիրախային ոլորտների և միջոցառումների համար որպես հիմնավորում, ներկայացրել են արդեն իսկ իրականացված ծրագրերի ընթացքում միջոցառումների ոչ բավարար կամ անարդյունավետ իրականացումը: Սակայն դրանց անարդյունավետության պատճառները վեր չեն հանվել, և հաջորդ ծրագրերի շրջանակներում նման հնարավոր պատճառների ազդեցությունը չի չեզոքացվել:

Ավելին, նշված ոլորտների և դրանցում արձանագրված խնդիրների լուծման կապակցությամբ շուրջ 20 տարի տարբեր միջազգային կառույցների կողմից տրվել են *նույնանման հանձնարարականներ*՝ օժանդակելով բարեփոխումների արդյունավետությանն ու առավել թիրախավորված գործողություններ ստանձնելուն: Սակայն, ինչպես ցույց են տալիս ծրագրային միջոցառումները, դրանք բարեփոխումների ծրագրերում ամբողջությամբ չեն ներառվել թե՛

օրենսդրական, թե՛ պրակտիկային ուղղված քաղաքականության մակարդակներում:

Հաշվետվողականության և հանրային ներգրավվածության բացակայություն

Իրականացված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատական և իրավական բարեփոխումների ծրագրերի վերաբերյալ կատարողական և ազդեցության գնահատման հաշվետվողականությունը հիմնականում բացակայել է: Բացի այդ, ծրագրերի մշակման գործընթացը լայն հանրային մասնագիտական ներգրավվածություն չի ապահովել: Սա է թերևս նաև պատճառ հանդիսացել, որ տարբեր տարիների ծրագրերում միջոցառումները կրկնվել են: Օրինակ, ինքնակառավարման մարմինների արդյունավետության բարձրացման, դատավորների նշանակման և կարգապահական պատասխանատվության ինստիտուտի արդյունավետ կիրառման համար թեև տարբեր ծրագրերի մեջ ներկայացվել են տարբեր միջոցառումներ, սակայն դրանց կատարողականի և ազդեցության գնահատման բացակայություն չի ներկայացվել:

Նման հաշվետվողականությունն էական նշանակություն կունենար ծրագրային խնդիրների կամ գործողությունների անարդյունավետությունը հաշվի առնելու և դրանց կրկնությունը բացառելու գործում:

Չնայած իրականացված բարեփոխումների ծրագրերը, դրանց միջոցառումները ողջունելի են, այնուհանդերձ, դրանց արդյունավետությունը բավարար չի եղել Հայաստանի Հանրապետությունում դատավորների անհատական և համակարգային անկախությունն ապահովելու համար: Նույնիսկ այն դեպքում, երբ ծրագրի շրջանակներում թիրախավորվել են իրական խնդիրներ, դրանց լուծմանն ուղղված միջոցառումները հանդիսացել են հատային կամ իրավիճակային: Նման մոտեցումը, կարելի է արձանագրել, պայմանավորված է եղել համակարգի իրական բարեփոխմանն ուղղված քաղաքական կամքի բացակայությամբ:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով 2018 թվականի ապրիլին խաղաղ հավաքների հետևանքով Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած փոփոխությունները՝ կարծում ենք, որ դատական և իրավական ոլորտի բարեփոխումը պետք է հանդիսանա ընդհանուր երկրի բարեփոխման առաջնահերթություններից մեկը:

Այն հիմնաքարային է և կարող է ապահովել մյուս ոլորտների բարեփոխումների ներդաշնակությունն ու ընդհանուր զարգացումը:

Այս առնչությամբ, այնուամենայնիվ, խիստ կարևոր է, որ դատական և իրավական բարեփոխումների նոր ծրագիրը հաշվի առնի նախորդ ծրագրերի թերացումները, բացթողումները թե՛ իրականացման ընթացակարգային, թե՛ բովանդակային, ոլորտային խնդիրների շեշտադրման առումով:

Որպես նոր դատական և իրավական բարեփոխումների նոր ծրագրի բաղկացուցիչ, գտնում ենք, որ դատական իշխանության ինքնակառավարման մարմինների գործունեությունը պետք է շեշտադրվի և դրանց ուղղված միջոցառումները պետք է կազմվեն համակողմանիորեն թե; պրակտիկ, թե՛ օրենսդրական անհրաժեշտ փոփոխությունների տեսքով:

### **Ծրագրի ընդհանուր մշակմանը, իրականացմանն ուղղված ընթացակարգային առաջարկություններ**

- ✓ Սահմանել դատական և իրավական բարեփոխումների ծրագրերի կատարողականի և ազդեցության գնահատման, հաշվետվողականության սխեմա՝ ներառյալ հաշվետվողականության պարբերականությունը, ցուցանիշները:
- ✓ Մշակել և որպես ծրագրի մաս ներկայացնել նախատեսված միջոցառումների համար անհրաժեշտ բյուջեն:
- ✓ Յուրաքանչյուր ծրագրի ավարտին ներկայացնել ֆինանսական հաշվետվություններ՝ ցույց տալով ծրագրի յուրաքանչյուր գործողության համար անհրաժեշտ և իրականում կատարված ծախսերը:
- ✓ Նոր ծրագրի շրջանակներում արտացոլել ըստ դատական իշխանության ոլորտների միջազգային կազմակերպությունների՝ ՀՀ-ին ուղղված հանձնարարականները, խորհրդատվական կարծիքները:
- ✓ Նոր ծրագրի խնդիրները, դրանց ուղղված միջոցառումները սահմանելիս իրականացնել իրավիճակի վերլուծություն՝ վեր հանելով կոնկրետ խնդիրներ ու, ըստ այդմ՝ դրանց ուղղված իրատեսական լուծումներ:

- ✓ Նոր ծրագրի շրջանակներում սահմանել գործողությունների իրականանալի ծավալ՝ ապահովելով իրատեսական արդյունքներ:

**Դատական իշխանության ինքնակառավարման մարմինների գործունեությանն ուղղված առաջարկներ**

- ✓ Ապահովել դատավորների նշանակման գործընթացի թափանցիկությունն ու օբյեկտիվությունը, մասնավորապես, համաձայն Վենետիկի հանձնաժողովի կողմից ՀՀ Դատական օրենսգրքի վերաբերյալ արտահայտած 2017 թվականի 893/2017 կարծիքի՝ ապահովել դատավորների հավակնորդների ցուցակների կազմման գործընթացում Բարձրագույն Դատական խորհրդի հայեցողական լիազորությունների շրջանակը:
- ✓ Վերացնել Դատական օրենսգրքով դատավորների նշանակման գործընթացին վերաբերող իրավադրույթների տարաբնույթ մեկնաբանությունների հնարավորությունը՝ ապահովելով գործընթացի ամբողջական անկախությունն ու օբյեկտիվությունը:
- ✓ Դատավորների նշանակման գործընթացի համար նախատեսել նշանակումների պատճառաբանված ու հիմնավոր որոշումներ կայացնելու պարտավորություն:
- ✓ Հստակեցնել և առավել կոնկրետացնել դատավորների կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող վարքագծի կանոնները՝ բացառելով պրակտիկայում դրանց տարատեսակ մեկնաբանության, և այդ միջոցով դատավորներին ճնշելու հնարավորությունները:
- ✓ Օրենսդրորեն ամրագրել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշման բողոքարկման գործուն և արդյունավետ մեխանիզմի հնարավորությունը:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 594-015  
էլ. փոստ narek.ghazaryan@justice.am

№ 19/56885-18  
26 « 06 » 20 18 թ.

**«ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ Ք. ԵՐԵՎԱՆ, ԱՄԻՐՅԱՆ 11, ԲՆ. 24, ՀԵՌ.՝ 010 505-303, ԷԼ. ՓՈՍՏ՝ info@prwb.am**

Հարգելի տիկին Հարությունյան

Ի պատասխան Ձեր՝ 2018 թվականի մայիսի 25-ի թիվ Ե/35 գրության՝ հայտնում եմ, որ 2006 թվականին Հայաստանի Հանրապետությունում իրականացված դատական և իրավական բարեփոխումների օրենսդրական նախաձեռնությունների փաթեթը և գործողությունների պլանը չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության շենքում 2008 թվականի փետրվարի 9-ին տեղի ունեցած հրդեհի պատճառով:

Միաժամանակ, տեղեկացնում եմ, որ Հայաստանի Հանրապետության նախագահի 2009 թվականի ապրիլի 21-ի «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» թիվ ՆԿ-59-Ն կարգադրությամբ հաստատված հավելվածի ներածության մեջ անդրադարձ է կատարված 2003-2006 թվականներին իրականացված դատական համակարգի ձևավորմանն ուղղված բարեփոխումների ընթացքին, հետևաբար՝ մինչև 2006 թվականը և 2006 թվականին Հայաստանի Հանրապետությունում իրականացված դատական և իրավական բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ վերոնշյալ փաստաթղթից:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**



**ՆԱՐԵԿ ՂԱԶԱՐՅԱՆ**

Կատարող՝ Անի Գալստյան  
Իրավական աստիճան՝ լիցենզիայով

Տարբեր ծրագրերի մեջ ռազմավարական նպատակների ու միջոցառումների կրկնությունները

ՆՊԱՏԱԿ/ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՀԵՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ			
	1996-2006	2009-2012	2012-2016	2018-2023
Դատական իշխանության ինքնակառավարման կատարելագործում	✓		✓	
Գործերի բաշխման գործընթացի բարելավում	✓	✓	✓	✓
Դատ. Իշխ. ներկայացուցիչների կրթության ու վերապատրաստման ինստիտուցիոնալ հիմքերի զարգացում	✓		✓	✓
ԴԱՀԿ ուժեղացում	✓	✓		✓
Իրավական տեղեկատվական համակարգի ստեղծում, հանրության իրազեկում	✓	✓	✓	✓
Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում		✓		✓
Արդարադատության մատչելիություն, արդյունավետություն, թափանցիկություն		✓	✓	
Ինֆրաստրուկտուրայի վերակառուցում, թարմացում	✓	✓		✓
Դատավորների նշանակման գործընթացի կատարելագործում		✓	✓	✓
Էթիկայի նորմերի կատարելագործում, պահպանման վերահսկողություն		✓		✓
Կարգապահական պատասխանատվության ինստիտուտի բարելավում		✓	✓	✓

Անվճար իրավաբ.խորհրդատվ. բարելավում		✓		✓
Փաստաբանական գործ. Արդյունավետության ուժեղացում		✓	✓	✓
Դատական ակտերի վարման վիճակագրության կատարելագործում		✓		✓
Դատական արխիվների արդիականացում		✓		✓
Վեճերի լուծման այլընտրանք. Մարմինների ստեղծում, զարգացում		✓	✓	✓
Դատավորների գնահատման արդյունավետ. բարելավում			✓	✓

Ներկայացված աղյուսակից երևում է տարբեր տարիներին իրականացված դատական և իրավական ծրագրերի շրջանակներում միննույն ոլորտային նպատակների ու միջոցառումների կրկնությունը: Մասնավորապես, ինչպես կարելի է նկատել, ընդհանուր առմամբ թվով 17 նպատակ ու միջոցառում կրկնվել է՝ երկու և ավելի անգամներ: Եղել են նաև միջոցառումներ, որոնք տեղ են գտել մինչ այսօր իրականացված բոլոր ծրագրերում: Մասնավորապես, դատավորների միջև գործերի բաշխման գործընթացի կատարելագործում, իրավական և տեղեկատվական համակարգի ստեղծում ու հանրության իրազեկում: Շարունակ կրկնվող միջոցառումների թվին են դասվում նաև դատական իշխանության ներկայացուցիչների վերապատրաստումներն ու դրա համար ինստիտուցիոնալ հիմքի ստեղծումը, ԴԱՀԿ ուժեղացումը, դատարանների շենքային պայմանների վերանորոգումը, դատավորների նշանակման համակարգի ու նրանց նկատմամբ կարգապահական վարույթների կատարելագործումը և այլն:

Այս և այլ միջոցառումների շարունակական կրկնությունը հնարավոր է բացատրել նշված ոլորտների շարունակական զարգացման անհրաժեշտությամբ: Միննույն ժամանակ պետք է նշել, որ նշված միջոցառումների վրա շարունակաբար իրականացվել են ֆինանսական հատկացումներ, սակայն այդ ոլորտները դեռևս հանդիսանում են դատական իշխանության ամենախնդրահարույց տարրերը, ինչի պարագայում վերջիններիս շարունակ կրկնությունը խոսում է անարդյունավետ ծախսերի մասին: